

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՆ
(1870—1890-ական թթ.)

Պատմ. գիտ. դոկտոր Ռ. Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

Պատմագիտական դրականության մեջ հատուկ ուսումնասիրության արժանի չի դարձել Ֆրանսիայի քաղաքականությունը Հայկական հարցում՝ այն միջազգային դիվանագիտության մեջ մտնելու պահից մինչև Լոդանի կոնֆերանսը, որն ըստ էության փակեց այդ հարցը։ Առավել մեծ տեղ է հատկացվել Անգլիայի ու Ռուսաստանի, ինչպես նաև Գերմանիայի ու ԱՄՆ-ի դերի վերհանմանը։ Ֆրանսիական դիվանագիտությանը անդրադարձել են հարևանցիորեն, հիմնականում այն «մերկացնելու» միտումով, առանց այդ դիվանագիտության ձեռնադրած քայլերի բուն դրապատճառները վերհանելու և գիտական անաչառությամբ քննելու փորձերի։ Եղել են և միակողմանի, ծայրահեղ կամ խիստ չափազանցված գնահատականներ ու եզրահանգումներ, որոնց մեջ առանձնանում է բազմապատակ պատմաբան Լեոյի «մեղադրականը»։ «Ոչ մի երկիր, — գրում է Լեոն, — ո՛չ մի ազգություն երբեք հայության այնքան կատաղի, այնքան արյունարբու և ստոր, մինչև զգվելությունն ստոր թշնամին չէ եղել, ինչպես Ֆրանսիան»¹։

Ավելի հեռուն գնալով, Լեոն անողոր քննադատության է ենթարկել ոչ միայն պաշտոնական Ֆրանսիայի հայավնաս գործելակերպը, այլև հասարակական-քաղաքական այն շարժումը, որը ծավալվել է այդ երկրում ի պաշտպանություն արևմտահայ ժողովրդական զանգվածների մշած ազատագրական պայքարի²։ Սակայն Լեոն իրավացի էր, երբ նա գրում էր, որ «հայ արյան գետերը, մինչև աստղերը բարձրացած հայ տառապանքի հեծեծանքները շահագործվում էին՝ Գերմանիայի դեմ կռվելու համար»³։

Մեր պատմագիտությունը անտեսել է նաև այն իրողությունը, որ Ֆրանսիայի հայկական քաղաքականությունը, այսինքն Արևմտյան Հայաստանում նրա հետապնդած նպատակները ստորադիր էին նրա բուլգական քաղաքականությանը թեկուզ այն պատճառով, որ Օսմանյան կայսրությունը պետություն էր, իսկ Հայաստանը՝ ոչ։ Անտեսվել կամ թերագնահատվել են Ֆրանսիայի տնտեսական ու դրամական շահագրգռվածությունը թուրքական գործերում և, վերջապես, կրոնական գործում, այսինքն այն փաստը, որ Ֆրանսիան մահմեդական բազմամիլիոն բնակչություն ունեցող խոշորագույն պետություններից մեկն էր աշխարհում⁴։

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայկական հարցի պատմական զարգացման տարբեր փուլերում Ֆրանսիայի կառավարող շրջանների վարած քաղաքականությունը այս կամ այն չափով կախված է եղել իրեն դաշնակից կամ մրցակից տերությունների քաղաքականությունից, սակայն

¹ Լեո. Անցյալից, Հուլիս, թղթեր, դատումներ. Թիֆլիս, 1925, էջ 347։

² Տե՛ս նույն տեղում, էջ 344—346։

³ Նույն տեղում, էջ 347։

⁴ Բրիտանական կայսրության կազմում կային 92 մլն մահմեդականներ, Հոլանդիայի գաղութներում՝ 36 մլն, Ֆրանսիական գաղութներում՝ 23 մլն։ Տե՛ս. René Puaux. La question d'Orient devant le Parlement (Séance du 29 octobre 1922). Paris, 1922, p. 17—18.

բոլոր գեպքերում այն կրել է հիմնականում ինքնուրույն և հետևողական բնույթ:

Առաջին փուլում, որը, մեր կարծիքով, ընդգրկում է Արևելյան ճգնաժամից, Սան Ստեֆանոյի ու Բեռլինի պայմանագրերի ստորագրումից մինչև 1890-ական թթ. կեսերը, Ֆրանսիական դիվանագիտությունը, ի հակակշիռ Գերմանիայի, հաճախ ստիպված էր հավանություն տալ Անգլիայի մերձավորարևելյան քաղաքականությանը, ինչն առաջին հերթին պայմանավորված էր Բալկաններում ու Մերձավոր Արևելքում Ռուսական կաշառության առաջխաղացումը կասեցնելու հույժ կարևոր խնդրով:

Սակայն Ֆրանսիան, ի տարբերություն Հայկական հարցում բխմարկյան Գերմանիայի դրսևորած արհամարհական վերաբերմունքի և Անգլիայի թուրքապաշտպան դիրքորոշման, գործում էր ավելի նրբանկատ ու զգույշ: Այսպես, երբ 1878 թ. մարտի 19(31)-ին Փարիզ ժամանեց Կ. Պոլսի նախկին պատրիարք և Ամենայն հայոց ապագա կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի: պատվիրակությունը, Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Վադիգ-տոնը, ընդունելով Մ. Խրիմյանին, ասել էր հետևյալը. «Կարող եք վստահ լինել, որ Ֆրանսիան անտարբեր չէ Հայաստանի վիճակին: Ծա անձամբ համակրում եմ ձեր դատին, որովհետև պտտել եմ Ասիայում, ուսումնասիրել եմ ձեր ժողովրդի պատմությունն ու գրականությունը և ճանաչել եմ բազմաթիվ նշանավոր հայեր: Ծա տրամագիր եմ ձեր դատը պաշտպանելու կոնգրեսում, ուր ոչ ոք ինձանից լավ չէ ճանաչում ձեր ազգն և ձեր երկիրը...»⁵:

Ֆրանսիական դիվանագետն այնուհետև որոշ խորհուրդներ է տալիս միանգամայն անփորձ պատրիարքին. «Դուք կոնգրեսին դրական տեղեկություններ պետք է ներկայացնեք, և այն ժամանակ ավելի լավ կհասկանան ձեր դատն, որ այդ կերպով գործնական շավղի մեջ կմտնե: Զեր հիշատակագիրն ընդհանուր գաղափարներ է միայն բովանդակում, իսկ մեզ հարկավոր են շոշափելի ապացույցներ: Հիշատակագիրը Հայաստանի համար այնպիսի վարչություն է պահանջում, ինչպիսին ունի Լիբանանը. բայց Լիբանանը կարելի չէ Հայաստանին նմանեցնել: Լիբանանում թուրք չկա, իսկ ձեր երկրում շատ կա: Հետևաբար Լիբանանի վարչական դրությունը չէ կտրելի հարմարեցնել Հայաստանին: Պետք է մի այլ ընդունելի ծրագիր ներկայացնել կոնգրեսին: Պետք է մանրամասն վիճակագրական ցուցակ ներկայացնել, թե հայերն ո՞ր գավառում մեծամասնություն են կազմում, ո՞ր գավառում փոքրամասնություն: Կոնգրեսի անդամները սառնասիրտ մարդիկ են, պլատոնական վավերագրերով չեն կարող բավականանալ, անհրաժեշտ է մի գործնական միջոց ցույց տալ: Կոնգրեսի գործը հեշտացնելով դուք ձեր դատի հաղթանակը հեշտացրած կը լինեք...»⁶:

Բերված խոսքերն այս կամ այն չափով արտացոլում էին Ֆրանսիական պաշտոնական տեսակետը Բեռլինի վեհաժողովի նախօրյակին:

Ինչ վերաբերում է պարբերական մամուլին, Փարիզի թերթերն, ինչպես միշտ, արտացոլում էին խիստ տարբեր կարծիքներ: Այսպես, առավել ազդեցիկ օրաթերթերից մեկը՝ «Ժուռնալ դե դեբան» գրում էր, որ «Արևելքի ժողովուրդներից ո՛չ մեկը հայոց չափ արժանի չէ ոչ միայն Ֆրանսիայի, այլև համայն արևմտյան ազգերի համակրությանն ու բարոյական ձեռնտվությանը», որ Հայաստանը «հատուկ իրավունքներ ունի Ֆրանսիայի պաշտպանությունը վայելելու»⁷:

⁵ Ս ա ր ո լ ի ա ն. Հայկական խնդիրն և ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860—1910). Կ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 371:

⁶ Նույն տեղում, էջ 371—372:

⁷ «Մասիս», Կ. Պոլիս, 1878, № 2144: Մեղբերվում է ըստ՝ Զ. Կ ի թ ա կ ո ս լ ա ն. Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը. Երևան, 1978, էջ 227:

Ֆրանսիական դիվանագիտության բռնած դիրքը շատ շուտով հաստատեց, որ իրականությանը համապատասխանում էին ոչ թե վերը բերված շուրջը, բայց չպարտավորեցնող գովասանքները, այլ թերթերից մեկի հետևյալ խոստովանությունը. «...Եթե անկախություն տրվեր հայերին... խիստ շատ պիտի վստահեին անոր վրա: Դարերի ի վեր օսմանյան լուծին ներքև մնալով, անոր հարմարած են, անոր ներքև խոնարհած են իրենց հատուկ դուրաթեքությունը և կրցած են միշտ տերության մեջ համեստ, բայց իրենց շահավետ դեր մը խաղալ: Իրոք, հայերը միայն քիչ մ'արգարություն և ապահովության պետք ունին...»⁸:

Սակայն այդ «քիչ մը արգարությունն ու ապահովությունն» անդամ չպաշտպանվեց Բեռլինի վեհաժողովում ֆրանսիական առաջին պատվիրակ, արտաքին գործերի մինիստր Վադինգտոնի կողմից, քանզի Ֆրանսիան ուրիշ հոգսեր ուներ՝ ընդարձակել իր գաղութային տիրույթները՝ հայցելով Անգլիայի համաձայնությունը: Վերջինս, սուլթանից ստանալով իրեն պարզեց «Կիպրոս կղզին՝ իր թուրքապաշտպան դիրքորոշման դիմաց, պաշտպանվեց չխանգարել Ֆրանսիային հաստատվելու Թունիսում: Ավելին, արտաքին գործերի մինիստր լորդ Սոլսբերին Ֆրանսիային առաջարկել էր ազդակի անհրաժեշտ եղանակով Թունիսը, որն այդ ժամանակ մտնում էր Օսմանյան կայսրության մեջ: Այդ կապակցությամբ Վադինգտոնը հաղորդում էր, որ զրույցներից մեկի ժամանակ Սոլսբերին ասել էր իրեն. «Արեք այնտեղ (Թունիսում—Ռ. Ս.) ինչ որ ուզում եք... Դուք պարտավոր կլինեք գրավել այն, դուք չեք կարող կարթագենը թողնել բարբարոսների ձեռքում»⁹:

Սակայն ի՞նչ նոր խորհուրդներ էր տալիս Վադինգտոնը հայկական պատվիրակությանը, որը Անգլիա կատարած շրջագայությունից հետո 1878 թ. հունիսի 1(13)-ին հասել էր Բեռլին՝ կոնգրեսի բացման օրն իսկ: Ֆրանսիական առաջին պատվիրակը, որը մարտ ամսին հանձն էր առել պաշտպանել հայկական խնդիրը կոնգրեսում, այժմ գտնում էր, որ լավագույնը կլինի, եթե հայկական պատվիրակությունը իր դատի վերաբերյալ բոլոր թղթերն անհապաղ ուղարկի կոնգրեսի ամեն մի անդամին, որպեսզի նրանք նախապես ծանոթանան հարցին և պատրաստ լինեն, երբ կոնգրեսը սկսի քննել Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը¹⁰: Վադինգտոնը նաև ավելացնում է, թե նա պիտի խորհրդակցի մյուս լիազորների հետ ևս, որ վերջնական գաղափար կազմե մեր խնդրի մասին. նախ պիտի խոսի այն լիազորների հետ, որոնք առանձնապես շահագրգռված են Հայաստանի վիճակով, և պիտի լսե նրանց նկատողություններն այս առթիվ, և ապա պիտի հրավիրե հայ պատվիրակներին, որ զան իրենց բացատրությունները տան»¹¹:

Ունկնդրելով ֆրանսիական մինիստրին, Մ. Խրիմյանը և պատվիրակության անդամ Խորեն Գալֆայանը (Նար-Պեյը) հունիսի 13(25)-ին Կոնգրեսում Անգլիայի, Ավստրիայի, Գերմանիայի, Իտալիայի և Ռուսաստանի առաջին լիազորներին ուղարկում են խնդրագիր և Հայաստանի ինքնավարության վերաբերյալ ծրագիրը՝ Կազմակերպական կանոնագիր (Reglement Organique):

«Մենք քաղաքական ազատություն չէ, որ պահանջում ենք և ոչ էլ ձերեք ուզում ենք բաժանվել թրքական կառավարությունից,— ասվում էր խնդրագրում: Մենք ուզում ենք Թրքական Հայաստանի մի բաժնում, այն

⁸ Տե՛ս նույն տեղում:

⁹ Documents Diplomatiques Français. 1-ère série, t. 2, Paris, 1923, p. 361—362. մեջբերվում է ըստ՝ Օ. Բ. III п а з о. Захват Кипра Англичей. М. 1974, с. 216—217.

¹⁰ Ս ա ռ ո խ ա ն. նշվ. աշխ., էջ 417:

¹¹ Պատվիրակության անդամ Մինաս Զեբազը Վադինգտոնի այս խոսքերին կցում է իր դիտողությունը, թե ֆրանսիական մինիստրը նվազ անկեղծ երեսց իրեն այժմ, քան թե է՛ր նա փարկում: Տե՛ս Ս ա ռ ո խ ա ն. նշվ. աշխ., էջ 418:

է՝ էրդրուսի և Վանի վիլայեթներում և Դիարբեքի վիլայեթի հյուսիսային մասում, ուր թվական առավելություն ունենք թուրքերի վրա, ինչպես ցույց են տալիս ընդամենն երկայացված վիճակագրական վավերագրերն, ահա այս բաժնում, կրկնում ենք, ուղում ենք ունենալ մի հայ վալի, որ պետությունների հավանություն կարգվի Բ. դռնից: Այս վալին պիտի նշանակվի որոշ ժամանակամիջոցի համար. նա իր ձեռքի տակ պետք է ունենա ոստիկանություն՝ կարգն ու ապահովությունը պահպանելու համար և երկրի եկամտի մի մասն՝ երկրի բարոյական և նյութական բարգավաճման սատարելու համար...»¹²: Խնդրագրի վերջում ասվում էր, որ «եթե այս բոլոր կարգադրություններն եվրոպական հսկողությունը չնրվալովորվեն, անշուշտ վերջստին պիտի երևան մահմեդական ռեժիմի տխուր ավանդություններից ծագած այն պարբերական ջղաձգություններն, որոնց առաջն առնելու մասին է հոգում այժմ միացյալ Նվրոպան»¹³: Վերը նշված զույգ փաստաթղթերից կցված էր ապագա «ինքնավար Հայաստանի» աշխարհագրական քարտեզը:

Ստանալով հայ պատվիրակության ներկայացրած փաստաթղթերը, Բեռլինի կոնգրեսի նախագահը՝ Գերմանիայի կանցլեր իշխան Բիսմարկը դրանք զետեղում է աղբյուրագրերի ծրարում, մի բան, որ հարցականի տակ էր առնում դրանց քննարկումը կոնգրեսի նիստերում: Հայտնելով այդ մասին հայ պատվիրակներին, Վադինգտոնը նրանց խորհուրդ է տալիս դիմել Բիսմարկին և խնդրել նրան օրակարգի մեջ առնել հայկական առաջարկների քննությունը: Հաջորդ օրն իսկ հայկական պատվիրակությունը նամակ է ուղարկում Բիսմարկին, որն ի վերջո համաձայնվում է օրակարգի մեջ մտցնել և քննության ենթարկել 16-րդ հոդվածը:

Հայ պատվիրակներին տրված այս «կազմակերպական» բնույթի խորհուրդներով էլ սահմանափակվեց այն օգնությունը, որ Ֆրանսիան ցույց տվեց հայերին Բեռլինի կոնգրեսում: Վադինգտոնը չհապաղեց նախազգուշացնելու հայ ներկայացուցիչներին, որ նրանք մեծ հույսեր չունենան», որովհետև, ինչպես նա արտահայտվել էր, «եթեպետ ես Ձեր դատը պաշտպանում եմ, բայց չեմ կարող իմ ընկերակիցներին ստիպել, որ նրանք անպատճառ իմ առաջարկություններն ընդունեն»¹⁴:

Ժիշտ է, Ֆրանսիական մինիստրը մի անգամ էլ փորձեց փր խորհուրդներով օգնել հայ պատվիրակներին, բայց դարձյալ ապարդյուն: Խոսքն այն մասին է, որ երբ կոնգրեսի 12-րդ նիստում Հայաստանի ինքնավարության ծրագիրն սկզբունքորեն մերժվեց, Վադինգտոնը հուշեց մի այլ ծրագիր (Contreprojet)՝ Հայաստանում անցկացվելիք բարենորոգումները երաշխավորվեն մեծ տերությունների կողմից, ինչը նույնպես չկայացավ Անգլիայի ճարպիկ քայլի՝ անգլո-թուրքական գաղտնի համաձայնագրի ստորագրությամբ (1878 թ. հունիսի 4-ին), որով Թուրքիան, ի դիմաց կոնգրեսում իրեն մատուցվելիք ծառայության, Կիպրոս կղզին ղեջում էր Անգլիային:

Թե ինչ վախճան ունեցավ 16-րդ հոդվածի քննարկումը վեհաժողովում, քաջ հայտնի է. Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը ի չիք էր դարձնում այն կարևոր երաշխիքը, որի առկայությունը գուցե հնարավորություն տար իրականացնելու այնքան բաղձալի բարենորոգումները Արևմտյան Հայաստանում:

Անցավ երկու տարի: Հարստահարություններն ու բռնություններն Արևմտյան Հայաստանում շարունակվում էին նոր թափով և առավել անսքող, արձագանք գտնելով Նվրոպայի մի շարք երկրներում: Հասարակական կարծիքը մեղմելու և, միաժամանակ, արևմտահայության հոգևոր առաջնորդների աչքին «թող փչելու» նպատակով, Կ. Պոլսում հավատարմագրված վեց

¹² L' Armenie. 1890, № 3. մեջբերվում է ըստ՝ Ս ա ր ու խ ա ն. նշվ. աշխ., էջ 419:

¹³ Նույն տեղում, էջ 420:

¹⁴ Ս ա ր ու խ ա ն. նշվ. աշխ., էջ 459:

տերությունների (Անգլիա, Ռուսաստան, Գերմանիա, Ֆրանսիա, Ավստրո-Հունգարիա, Իտալիա) դեսպանները 1880 թ. հունիսի 11-ին Ռ. դոանը ներկայացրեցին միացյալ հուշագիր Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի լիակատար և անմիջական իրագործման մասին: Հուշագրում պահանջվում էր, որ թուրքական սուլթանը, այսինքն Աբդուլ Համիդ II-ը, կատարի 61-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունները և հաշվետվություն ներկայացնի ձեռք առնված միջոցների մասին:

Ի պատասխան այդ հուշագրի, Օսմանյան կայսրության արտաքին գործոց մինիստր Աբեդին փաշան 1880 թ. հուլիսի 5-ի իր ժանուցագրում փարիսեցիորեն ճգնում էր հավատացնել դեսպաններին, թե իբր ամեն ինչ կարգին է Քյուլորդիստանի¹⁵ ամեն մասերում և ուրիշ վիլայեթներում մեջ, որ յուրաքանչյուր նահանգի մեջ պիտի կազմակերպվի մասնավոր կանոնադրություն՝ նահանգային քաղաքապահության մարմին մը, որուն սպաններն ու զինվորները պիտի ընտրվին կայսրության հպատակ եղող բոլոր դասակարգերում մեջեն, և որ պիտի դրվի նահանգապետներուն հրամաններուն ներքև, գավառապետներու և գավառակապետներու տրամադրության տակ դրվելու համար», թե իբր օսմանյան կառավարությունը արդեն հասարակաց պաշտոններու մեջ ընդունած է կարող և պարկեշտ անձեր՝ առանց կրոնական խտրության» և այլն: Ծանուցագրի վերջում օսմանյան արտգործնախարարը «պարտք էր համարում բացորոշ և ճշգրիտ եղանակով հաստատել», թե իբր պաշտոնական մարդահամարի արդյունքների համաձայն Վանի, Դիարբեքի, Բիթլիսի, Էրզրումի և Սվասի վիլայեթների հայ բնակիչների թիվը կազմում է ընդհանուրի 17 տոկոսը, մյուս ոչ-մուսուլմաններինը՝ 4 տոկոս, իսկ մուսուլման բնակիչներինը՝ 79 տոկոս¹⁶:

Թուրքական պատասխանը վեց տերությունների միացյալ հուշագրին այն աստիճան խաբեպատիր էր, որ վերջիններս ստիպված էին նույն 1880 թ. սեպտեմբերի 7-ին պատասխանել Աբեդին փաշայի ստորագրած թանուցագրին: Վեց տերությունների սեպտեմբերի 7-ի կոնկլավի նոտայում, որի տակ դրված էր նաև Ֆրանսիայի դեսպանի ստորագրությունը, մասնավորապես նշվում էր, որ «ներքոստորագրայինը նույնիսկ չեն կարող ասել, թե Բարձր դոան պատասխանը գոնե որոշ բավարարություն տվել է այն բողոքներին, որոնք շարադրված են հունիսի 11-ի իրենց նոտայում»¹⁷:

Դիվանագիտական այս «դեմարշով» էլ վերա հասավ պաշտոնական Ֆրանսիայի այն լուրջունը Հայկական հարցում, որը տևեց մինչև 1890-ականների «մեծ ջարդերը», մի ժամանակաշրջան, երբ ձևավորվում էր ուս-Ֆրանսիական դաշինքը ընդդեմ Գերմանիայի և շարունակվում Ֆրանսիական խոշոր դրամատիկների բուռն ներթափանցումը Օսմանյան կայսրություն: Հենց իր դրամատիկական, տնտեսական ու քաղաքական շահերից ելնելով էր, որ Ֆրանսիան հետևողականորեն հանդես էր գալիս Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու օգտին:

Ինչպես հայտնի է, 1881-ին սուլթանի անունից հրապարակված «Մուհարրեմի հրամանագրով» ստեղծվում էր օսմանյան պարտքի վարչություն (Administration de la Dette publique Ottomane), որն էլ պիտի իրականացներ պարտքի վճարման համար ստացվող եկամուտների հավաքման և գանձման իրավունքը: Եվ եթե ի նկատի ունենանք, որ հիշյալ վարչության մեջ, որի կազմում էին Անգլիայի, Գերմանիայի, Իտալիայի, Բելգիայի և

¹⁵ Հայաստան բառն այդ ժամանակ փոխարինվել էր Քուրդստանով:

¹⁶ Լրիվ տեքստը տե՛ս ԼԿԽ. Հայոց հարցի վավերագրերը. Թիֆլիս, 1915, էջ 165—172:

¹⁷ Մեքքեթում է ըստ՝ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, կազմողներ. Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան. Երևան, 1991, էջ 8: Լրիվ տեքստը տե՛ս «Положение армян в Турция до вмешательства держав в 1895 году». М., 1896, с. 96—103.

Հուլանդիայի ներկայացուցիչները, ֆրանսիացիները գերիշխող դերք էին դրավում շնորհիվ այն բանի, որ օսմանյան պարտքի 60, 31 տոկոսը (2454 417 377 ֆրանկ) նրանց ձեռքում էր¹⁸, ապա առավել հասկանալի կլինի այն կենսական շահագործվածությունը, որ Ֆրանսիան հանդես էր բերում թուրքական գործերում:

Եվ այսպես, տարիներն անցնում էին, իսկ Արևմտյան Հայաստանի հայ զանգվածների կյանքը ոչ միայն չէր բարելավվում, այլ ընդհակառակը, վատթարանում էր, դառնում անտանելի:

«Հայերը չեն դադարում պահանջել հայտարարված բարենորոգումների իրականացումը,— գրում էր «Հայաստանն ու հայերը» գրքի հեղինակ Ժ.—Ա. Գաթերիասը: Սակայն ամեն ինչ գալիս է ենթադրելու, որ օսմանյան կառավարությունը դեռ երկար ժամանակ չի որոշի դրանք կիրառել կյանքում»¹⁹: (Դնչպես ասվեց, դրական ոչ մի արդյունք չտվեց հվրոպական վեց տերությունների 1880 թ. սեպտեմբերի 7-ի կոնկլտիվ նոտան):

Ստեղծված իրավիճակը հայ հայրենասերներին մղում էր ընդլայնման, միավորվելու ու կազմակերպվելու փորձերի: 1880-ական թթ. սկզբից ինչպես բուն երկրում՝ Կարին, Վան, այնպես էլ Ռուսաստանում ու Եվրոպայի մի շարք երկրներում կազմակերպվում են հայրենասիրական խմբակներ, հայրենիքի պաշտպանության կոմիտեներ: 1882 թ. սեպտեմբերին Բուդապեշտում հիմնվում է Հայրենասիրաց ընկերություն, որն իրեն պաշտոնապես կոչում էր «Հայրենիքի իրավունքների պաշտպանության կոմիտե»: Վերջինս հաճախ հանդես էր գալիս Եվրոպայի հայ հայրենասիրական կազմակերպությունների անունից: 1885 թ. հոկտեմբերի 27-ին հիշյալ կոմիտեն Վառնայի ռուսական փոխյուպատոսի միջոցով Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրին է ուղղում մի դիմում արևմտահայությանը օգնության հասնելու խնդրանքով²⁰: Սակայն այդ նույն Բուդապեշտից հայ հայրենասերները հնչեցնում էին հվրոպական դիվանագիտությանը այլևս չվստահելու և սեփական ուժերին ապավինելու կոչեր: Նույն 1885-ին Վանից արտաքսված Մկրտիչ Փորթուգալյանը հաստատվում է Մարսել քաղաքում և սկսում հրատարակել «Արմենիա» օրաթերթը: Հայ հայրենասերները ստեղծում են տարբեր ազգային կոմիտեներ, լույս են թափում պարբերականներ, ցույց կազմակերպում Սեն-Դենի քաղաքում՝ Կիլիկիայի վերջին թագավոր Լեոն VI Լուսինյանի շիրիմի մոտ և այլն:

1886-ի նոյեմբերի 4-ին Հայ հայրենասերներին միությունը, որի նախագահն էր հայազգի Ժողեֆ Իսքենդերը, իսկ քարտուղարը՝ փաստաբան Ժան Բրուսալին (Հովհ. Բրուսալյան), Փարիզում կազմակերպում է ճաշկերույթ ի պատիվ հայտնի բանաստեղծ և լիբերալ քաղաքական գործիչ, ժագումով իսպանացի էմիլիո Կաստելարի, նպատակ ունենալով հասարակության ուշադրությունը հրավիրել Հայկական հարցի վրա: Ողջունելով Կաստելարին, Ժան Բրուսալին նշում է, որ հայ հայրենասերներն օգտվում են առիթից՝ քաղաքակիրթ աշխարհի ուշադրությունը գամելու մեր հայրենիքի ողբալի վիճակի վրա, հայրենիք, որը գտնվում է այնպիսի մի ռեժիմի լծի տակ, որին բնորոշ են ավերումը, տգիտությունը, ոչնչացումն ու բռնությունը: Ուստի մենք հայցում ենք բոլոր վեհանձն ու ազատամիտ հոգիների աջակցությունը՝ շուտափույթ կերպով հաստատելու համար վարչական ու տեղական այն ինքնավարությունը, որը մեզ շնորհել է Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը²¹:

Իր պատասխան ճառում է. Կաստելարը շեշտեց, որ «հայ ժողովրդի դատը միանգամայն արդարացի է, իսկ Հայաստանի հանդեպ քաղաքակիրթ

¹⁸ L'Asie Française, № 175, février—juillet, 1919, p. 180.

¹⁹ J.-A. Gatterias, L'Arménie et les Arméniens, Paris, 1882, p. 9.

²⁰ С. В. Овнянн. Армяно-болгарские исторические связи. Ереван, 1968, с. 214.

²¹ Emilio Castelar et la Question Arménienne, Paris, 1887, p. 12.

աշխարհում առաջացած համակրանքը՝ համընդհանուր, ուստի ինքը իր համեստ ուժերը՝ խոսքով ու գրչով կծառայեն կեղեքված ժողովուրդին՝ րից մեկի՝ հայ ժողովրդի պաշտպանության գործին²²։

Տասն օր հետո՝ 1886 թ. նոյեմբերի 14-ին Հայ հայրենասերների միության անդամները նոր հավաք կազմակերպեցին Փարիզի «Ռիշ» սրճարանում, դարձյալ ի պատիվ է. Կաստելարի, այս անգամ ընդունելությանը փորձելով տալ ինչ-որ չափով պաշտոնական բնույթ. ներկա էր Ֆրանսիայի անսատի սղագրողներից մեկը՝ է. Դըլոն, հրավիրված էին պառլամենտի անդամներ Բարտելեմի Սենտ-Իլերը, Ժյուլ Սիմոնը, Անրի Լիուվիլը, Ա. Մեզիերը, Ֆրեգերիկ Պասսին, է. դը Լատրը, Տոնի Ռեվիյոնը, ճանաչված հրապարակախոս և քաղաքական գործիչ Անատոլ Լըրուա-Ռոլիոն, «Ռեվյու ֆրանսեզ»-ի խմբագիր էդուար Մաբրոն, ֆրանսիական ակադեմիայի մի քանի անդամներ, հայտնի պատմաբան Ալբեր Վանդալը, Սորբոնի պրոֆեսորներ, փնչպես նաև հասարակական գործիչներ ու գիտնականներ Շվեյցարիայից ու Բելգիայից, այդ թվում պառլամենտի անդամ, հայտնի իրավագետ Գ. Ռոլեն-Ժեկմենը։ Թվարկված պաշտոնական անձանցից շատերը ներկա չէին երեկոյին՝ տարբեր պատճառներով, սակայն լայնորեն ներկայացված էր փարիզյան և օտար մամուլը, այդ թվում «Ֆիգարո», «Լը Տան» և այլ ֆազեթիկ (թերթեր, Նույթ, «Հանցողները»՝ „Correspondance etrangere“-ի խմբագիր և «Միջերկրական միության» տնօրեն Մ.Ա. Գրոմիեն, եգիպտական լրագրող Ժ. Սանուա Աբունադդարան, հրապարակախոս Արման Լեվին, Լատինական միության օրգան „Etendarts“ թերթի խմբագիր Ռակենին անդրադարձան հայերի առաջադիմական մշակութային-լուսավորական դերին Սամանյան կայսրությունում, մասնավորապես Կոստանդնուպոլսում, նրանց ստեղծարար գործունեությանը Եվրոպայի մի շարք երկրներում։ Մ.-Ա. Գրոմիեն իր ճառում ընդգծեց, որ հայ հայրենասերները, ջանալով արթնացնել քաղաքակիրթ եվրոպական հասարակությունը և նրա մոտ առաջ բերել հետաքրքրություն, համակրանք ու աջակցություն հանդեպ Հայաստանն ու Հայկական հարցը, պահանջում են լուրջ արդարություն. հայերը չեն ձգտում բացարձակ քաղաքական անկախության, այլ պահանջում են սոսկ վարչական ու տեղական ինքնավարություն՝ քրիստոնյա կառավարիչներով ու տեղաբնիկ ոստիկանությամբ, ինչպես դա գոյություն ունի Լիբանանում, մի բան, որ նրանց երաշխավորվել է Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով²³։

Աբու-Նադդարան թերթի տնօրենը ներկաներին հիշեցրեց, թե դաշտակցից մինչև ներկա ժամանակները հայ ժողովրդի զավակները՝ Արամի ազնիվ հետնորդները ինչպիսի ջանքեր են գործադրել Ասիայում, այդ թվում՝ և եգիպտոսում, «ցրելու համար տգիտության այն խավարը, որի մեջ ընկղմվել են այդ երկրների ժողովուրդները՝ իրենց բռնակալների անարդարության հետևանքով»²⁴։

Ֆրանսիական հրապարակախոս Արման Լեվին ընդգծեց է. Կաստելարի ծառայությունները ստեղծության վերացման գործում, անդրադարձավ Հայկական խնդրին, նշեց, որ տերությունները պարտավոր են պահանջել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի կիրառումը, քանի որ այդ հոդվածով Հայաստանին ինքնավարություն է տրվում²⁵։

Վերը նշված Ռակենին հանդես գալով Փարիզի իտալական համայնքի անունից, ողջունեց Հայ հայրենասերների միության վսեմ նպատակը՝ «Արևմուտքի քաղաքակիրթ ազգերին հիշեցնել, որ հինավուրց եվրոպայի սահմաններին, Ասիայում, կա մի բարեկամ ժողովուրդ, եղբայր ժողովուրդ, որը ֆարուր ծառայություններ է մատուցել քաղաքակրթությանը, սակայն դա-

²² Նույն տեղում, էջ 13։

²³ Նույն տեղում, էջ 33—34։

²⁴ Նույն տեղում, էջ 35—36։

²⁵ Նույն տեղում, էջ 36։

րեր ի վեր հեծում է ստրկական լծից, մի բան, որ ամոթ է բերում մարդկությանը»²⁶։ Վերջում հռետորը հույս հայտնեց, որ «այն օրը, երբ Ֆրանսիան, Իտալիան ու Իսպանիան կըմբռնեն իրենց իսկական շահերը, իրենց պատմական առաքելությունը, նրանք չեն հապաղի եղբայրական ձեռք մեկնելու դժբախտ Հայաստանին, օգնելու Արևելքի կեղեքվածների ազատագրությանը՝ հաղթանակով պսակելով ազատության ու արդարության սկզբունքները»²⁷։ Իր պատասխան ճառում էմիլիո Կաստելարը անդրադարձավ հայ ժողովրդի անցյալին ու ներկա իրավազուրկ վիճակին և հույս հայտնեց, որ Հայաստանը ի վերջո ձեռք կբերի իր ազատությունը, ինչպես որ դրան XIX դարի ընթացքում հասան Հունաստանը, Իտալիան, Սերբիան, Բուլղարիան ու Ռուսիան, դառնալով ազգային պետություններ, «ոքոպհետե այն երկիրը, որը շունի ազատություն, ազգ չէ»²⁸։ Այնուհետև նա նշեց, որ Հայաստանը բաժանվել է երեք կայսրությունների՝ Պարսկաստանի, Թուրքիայի և Ռուսաստանի միջև՝ դառնալով Արևելքի Լեհաստան»²⁹։ Վկայակոչելով Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը, է. Կաստելարը շեշտեց առավել կարևորը՝ այն իրականություն դարձնելը։ «Գոյություն ունի Եվրոպայի կողմից ստանձնված մի սպարտավորություն, ավելացրեց նա։ Մի հուսահատվե՞ք, համառե՞ք, գործե՞ք, և դուք կլինեք հաղթողներ»։

Նախ Իգնատ է հավատալ և այնուհետև գործել...»³⁰։

Վերջում հռետորը վստահեցրեց ներկաներին, որ Ֆրանսիայի պետական գործիչները «մի բան էանեն Բալյեի օգտին», և որ իր կարծիքով Անգլիան էլ «առեւէ գործնական քայլ կանի Հայաստանի համար»³¹ (ընդգծումն իմն է—Ռ. Ս.)։

Հայ հայրենասերների միության քարտուղար Ժան Բրուսալին երախտագիտության խոսքերով դիմելով է. Կաստելարին, հույս հայտնեց, որ 1789-ի Ֆրանսիական մեծ հեղափոխության 100-ամյակին (այսինքն երեք տարի հետո—Ռ. Ս.) Հայաստանը կլինի «ինքնավար և ազատ»³²։ Ֆրանսիացի երիտասարդ բանաստեղծ Ալբեր Սեն-Պոլը կարգաց Հայաստանին նվիրված իր բանաստեղծությունը։ Երեկոյին ներկա էր մոտ 100 մարդ³³։

Արևմտահայության տաղնապալի ու անապահով կյանքի պատկերը մերթ ընդ մերթ իր արտացոլումն էր գտնում Օսմանյան կայսրության մայրաքաղաքում հաստատված և երբեմն զավառներում շրջադալող Ֆրանսիացի լրագրողների՝ Փարիզ ուղարկվող թղթակցություններում։ Այսպես, Կ. Պոլսում Ֆրանսիական ազդեցիկ «Լը Տան» թերթի թղթակիցը 1888-ի փետրվարի 7-ին նշում էր («Հայկական հարցը» վերնագրով իր հաղորդման մեջ), որ օսմանյան կառավարությունը պատրիարքարանի ու հայ ազգի օրինակաբեղողներին ու պահանջներին բավարարություն տալու փոխարեն բռնել է բացարձակապես հարձակողական դիրք, որ նա սպառնում է նույնիսկ հայկական միացյալ այն ընկերությունների գոյությանը, որոնք ստեղծվել են պատրիարքարանի պատասխանատվության ներքո՝ Կ. Պոլսում և զավառներում դպրոցներ բացելու և նրանց կանոնավոր գործունեությունն ապահովելու նպատակով³⁴։ Առանձին վիլայեթներում հասել են այնտեղ, որ պաշտոնապես հայտարարել են այդ դպրոցները որոշակի ժամանակով փակելու մասին։ Միաժամանակ, թղթակցության մեջ ասվում էր Կ. Պոլսում ու

²⁶ Նույն տեղում, էջ 37։

²⁷ Նույն տեղում։

²⁸ Նույն տեղում, էջ 39։

²⁹ Նույն տեղում, էջ 40։

³⁰ Նույն տեղում, էջ 41։

³¹ Նույն տեղում, էջ 42։

³² Նույն տեղում, էջ 43։

³³ Մասնակիցների մասին տե՛ս նույն տեղում, էջ 48։

³⁴ Le Temps, 14. 02. 1888.

Վանի նահանգում կատարված ձերբակալությունների մասին, նշվում, որ քանտ նետված 30 հայերի մեջ կան եպիսկոպոսներ ու քահանաներ³⁵:

Այդ նույն թղթակիցը, սակայն, զարմանք էր հայտնում, որ թուրքական իշխանությունները խուզարկություններ էին արել Վարազա վանքում և այլուր, քանի որ, ըստ նրա ռուսմանյան կառավարությունը, ի պատիվ իրեն, սովորաբար մեծ բժախնդրություն է հանդես բերում կրոնական հանդուժողականությունը հարգելու և այդ սկզբունքը կյանքում կիրառելու հարցում: Եվ այդ «սկզբունքի» խախտումը Ֆրանսիացի լրագրողը փորձում էր բացատրել արտասահմանի հայկական թերթերում տպագրված հակաթուրքական սուր հռչակածներով, որոնք ձխիստ վաղաժամ են հայ ժողովրդի զանգվածի համար, որն, անշուշտ, չի մոռացել իր անցյալը, պահում է իր հիշողության մեջ կորսված հայրենիքի մորմոքը, սակայն այս ժողովրդի համար իր պետականության վերաստեղծման ու անկախ գոյության հույսը շատ անորոշ է և հեռավոր այն աստիճան, որ հազիվ թե հնաժամոր լինելը նրան գործողության որևէ ծրագիր առաջարկել³⁶:

* * *

Հայկական հարցում Ֆրանսիայի կառավարող շրջանների վարած քաղաքականության երկրորդ փուլը համընկնում է 1894—96 թթ. ազատագրական շարժումների և հայկական կոտորածների ժամանակաշրջանի հետ: Այն հատկանշական է նրանով, որ պաշտոնական Ֆրանսիան արդեն հանդես էր գալիս Ռուսաստանի հետ համերաշխ՝ ընդդեմ Անգլիայի ու Գերմանիայի ազդեցության տարածման, ըստ էության պաշտպանելով արդուհամարիայի բռնկալությունը: Ընդ որում, եթե ցարական ինքնակալությունն այդ բանն անում էր «խռովարար» հեղափոխական գաղափարները Ռուսաստան ներթափանցելու երկյուղից, ապա Ֆրանսիան առաջվա պես մտահոգված էր նեխած Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանումով՝ իր ներդրած կապիտալի շահույթը անխափան ստանալու համար:

Ֆրանսիայի կառավարող շրջանների լմիջամտելու քաղաքականությունը հանգեցրել էր այն բանին, որ 1890-ական թթ., մասնավորապես Սասունի 1894 թ. օգոստոսին սկսված հերոսական ինքնապաշտպանության օրերին՝ արագորոժինիստրության խոսափող „Le Temps“ օրաթերթը, լրագրերի ու տարբեր պարբերականների գերակշռող մասը քար լուծվում էր պահպանում, ընթերցողներից թաքցնում Արևմտյան Հայաստանում ծավալվող դեպքերը:

Ինչպես հայտնի է, Ֆրանսիական դիվանագիտությունն այդ տարիներին գլխավորում էր Գաբրիել Անտոն, որը 1894—1898 թթ. զբաղեցնելով արտաքին գործերի մինիստրի աթոռը, անփառունակ դեր խաղաց 1895—96 թթ. իրադարձությունների ժամանակ՝ Ֆրանսիական մամուլի կողմից արժանանալով Անտոն-փաշա ծաղրանվան³⁷: Չնայած դրան, Ֆրանսիական առաջադեմ հասարակական-քաղաքական շրջանակների, այդ թվում պառլամենտի անդամների բարձրացրած աղմուկը (որին մենք կանդրադառնանք)

35 Նույն տեղում:

36 Նույն տեղում:

37 Դժվար է, սակայն, համաձայնվել Կ. Պոլսում Ֆրանսիայի նախկին դեսպան Պ. Կամբոնի հետ, որն ըստ էության գերազնահատում էր Լորանով-Ռոստովսկու ազդեցությունը Գ. Անտոյի վրա: 1896 թ. սեպտեմբերի 1-ին Պ. Կամբոնը գրում էր (կնոջը հասցեագրված նամակում). «Ահա Լորանովը մահացավ... Ես չեմ խղճում Լորանովին... Ես նրան բողոքովին չէի վստահում: Նա ձգողական մեծ ուժ էր գործադրում Անտոյի վրա և նա առավել, քան որևէ մեկ ուրիշը, նպաստեց այն բանին, որ իրերի վիճակը Թուրքիայում մնա անփոփոխ: A. O. Sarkissian. Concert Diplomacy and the Armenians, 1890—1897. London, 1961, p. 70.

ստիպեց սուլթանի բարեկամ Անտոնյին համաձայնվել հրապարակ հանելու, իր իսկ ղլխավորած մինիստրության հովանու ներքո, հայտնի դեղին գիրքը՝ «Դիվանահատական փաստաթղթեր. Հայկական գործեր. Օսմանյան կայսրությանում բարենորոգումների նախագծեր, 1893—1897 թթ.» ընդհանուր խորագրի տակ³⁸, Երկհատորյա այդ ժողովածուում բերվում էին մեծ քանակությամբ փաստաթղթեր հայերի դրության վերաբերյալ արյունալի իրադարձությունների նախօրյակին և, գլխավորապես, 1895—96 թթ. զանգվածային ջարդերի մասին: Ֆրանսիական դեսպան Պոլ Կամբոնի, հյուպատոսների ու դիվանագիտական այլ աշխատողների զեկուլցներում տրվում էր հայկական կոտորածների իրական պատկերը հայաբնակ շրջաններում, վիլայեթներում, նահանգներում, քաղաքներում ու գյուղերում, բերվում էին տվյալներ զոհերի թվի վերաբերյալ, տուժած ընտանիքների ցուցակներ և այլն: Հիմնական հատորը պարունակում էր 365 փաստաթուղթ, իսկ հավելվածը՝ 178 փաստաթուղթ:

Հիշյալ ժողովածուն, փաստագրական արժեքից բացի, լափազանց կարևոր է նաև այն վերլուծությամբ ու գնահատականներով, որ ծավալվող իրադարձություններին տվել է դեսպան Պոլ Կամբոնը, Հայկական հարցի պատմությանը լավատեղյակ այդ դիվանագետը: Այսպես, տակավին 1894-ի փետրվարի 20-ի թվականի իր բնդարձակ զեկուլցում, հասցեագրված Ֆրանսիայի մինիստրների խորհրդի նախագահ և արտաքին գործերի մինիստր Ժան Կազիմիր-Պերիեին, Պոլ Կամբոնը կանխատեսել է իրադարձությունների հնարավոր զարգացումը. «Մեկ տարուց ավելի է, ինչ բուն Հայաստանը և նրա հարևան գավառները կարևոր չիրադարձությունների թատերաբեմ են: Մեր հյուպատոսները ամեն շաբաթ հաղորդում են նոր ձեռքակալությունների, հայերի և իշխանությունների միջև տեղի ունեցող արյունոտ բախումների մասին: Դեսպաններին հասցեագրված վերջին շրջաբերականում Բարձր գուռը խոստովանում էր, որ Ֆրեզաթում արյուն է հոսել, իսկ մեծ վեզիրը վերջերս ընդունում էր, որ Հայաստանը Դուան համար ամենալուրջ ստահոգության առարկան է:

Թուրքերը Արևելյան հարցը Ասիայի կողմից վերաբացելու նախապահված են»³⁹ (ընդգծումն իմն է—Ռ. Ս.):

Ընդգծելով Հայաստանի ռազմաքաղաքական կարևորությունը՝ «նրա անմատչելի լեռները կիսում և ամրոցողովին մեկուսացնում են Օսմանյան կայսրության մահմեդական երկու մասերը՝ Միջագետքը և Անատոլիան» — դեսպանը կառավարության ղեկավարի ուշադրությունն էր հրավիրում այն պատճառների վրա, որոնք հետագայում հանգեցրին 1894—96 թթ. իրադարձություններին. Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածով Եվրոպան հետաքրքրվում էր հայերի ճակատագրով, որոնք այդ շրջանում պարզապես բարենորոգումներ էին ուզում: Հայկական ազգային զարթոնք չկար, անկախության գաղափարը գոյություն չունեի տակավին: Բ. դուան անգործությունը հուսախաբ արեց հայերին՝ խոստացված ռեֆորմները չիրականացվեցին, իսկ պաշտոնյաների ծայրահեղությունները սկանդալային բնույթ ընդունեցին: Արդարադատությունը մնաց անփոփոխ: Քրդական «Համիդիե» զնդերի ըստեղծումը հանգեցրեց նոր բռնությունների, քանզի այդ հեծյալ զնդերը, որոնք ձեականորեն կոչված էին վերահսկել սահմանները, իրականում դարձան պաշտոնական թալանի ու կողոպուտի մի կազմակերպություն:

Զեկուցագրի հեղինակը եզրակացնում էր, որ հենց սուլթանի այդ քաղաքականությունը հանգեցրեց հայկական պրոպագանդին Եվրոպայում, առաջին հերթին Ֆրանսիայում, սակայն վերջինս, «պետք է խոստովանել,

³⁸ Ministère des Affaires Étrangères. Documents Diplomatiques. Affaires Arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman, 1893—1897. Paris, 1897. Supplément 1895—96, Paris, 1897.

³⁹ Նույն տեղում, էջ 10—11:

ոչինչ չհասկացավ դրանից և ամենևին չհետաքրքրվեց այն մարդկանցով, ովքեր նրան հիշեցնում էին Արարատ լեռան, Նոյի և Խաչակիրների մասին⁴⁰։ Խոսելով բարձրացող հայկական հուզումների մասին, ղեսպանը հարց էր տալիս. «Ի՞նչ լուծում կարող է ունենալ Հայկական հարցը։ Անկախ Հայաստանի ստեղծում։ Պետք չէ նույնիսկ մտածել այդ մասին, որովհետև հայերը սփռված են Թուրքիայով մեկ, իսկ բուն Հայաստանում էլ խառնված են մահմեդական ազգաբնակչության հետ։ Դրան գումարած, Հայաստանը մասնատված է Թուրքիայի, Պարսկաստանի և Ռուսաստանի միջև։ Մնում է,— եզրափակում էր Պոլ Կամբոնը,— բարենորոգումներ անցկացնելու խոստումը, սակայն, հայտնի է, թե նման կարգի խոստումները ինչ արժեք ունեն Թուրքիայում։ «Ուրեմն, Հայկական հարցի հնարավոր լուծում գոյություն չունի»,— ամփոփում էր իր զեկուցագիրը Ֆրանսիական ղեսպանը։ Այն կմնա բաց, և թուրքերն իրենց հողի կառավարմամբ ու անշարժությամբ միայն կորոբոքեն այդ հարցը։ Ժամանակ առ ժամանակ, բռնություն մի նոր ժայթքում կարթնացնի ամենաբուռն բողոքներ կամ կհրահրի խռովություններ⁴¹։

Դեպքերի հետագա ընթացքը հաստատեց Պ. Կամբոնի կանխատեսումները։ 1894 թ. օգոստոսի սկզբին Թուրքական զորքերի կողմից պաշարված Սասնո գյուղերն անցան քաջարի ինքնապաշտպանության։ Սուլթանը դրան պատասխանեց խաղաղ հայ ազգաբնակչության ջարդերով, որոնք լայն արձագանք գտան Նվրոպայում։ Համաշխարհային հասարակական կարծիքը մոլորության մեջ դրելու նպատակով Սերգու Համիդը համաձայնվեց Սասուն ուղարկել քննիչ հանձնաժողով, որի կազմում, ի թիվս Անգլիայի և Ռուսաստանի ներկայացուցիչների, որպես դիտորդ մասնակցում էր նաև Ֆրանսիայի պատվիրակը։ Սակայն դա միջազգային հանձնաժողով չէր, ինչ որ պահանջում էր հասարակայնությունը, այլ Թուրքական հանձնաժողով, որի առաջ խնդիր էր գրված հենց հայերի վրա բարդել կոտորածների ողջ պատասխանատվությունը։ Թուրքական պաշտոնաթերթ «Թարիքը» չէր թաքցնում, որ «հանձնախմբի նպատակն է բացահայտել այն հանցավոր արարքները, որ կատարել են հայ ավազակները, թալանելով ու ամաչացնելով գյուղերը»⁴²։

Անոտոյին ուղղված 1894-ի դեկտեմբերի 7-ի զեկույցում Կամբոնը, տեղեկացնելով սուլթանի հետ իր ունեցած հանդիպման մասին, մատնանշում էր, որ հայկական հարցը անսպասելի զարգացում կունենա, ուստի Ֆրանսիայի համար լավ կլինի, որ նա հենց սկզբից ընդունի ճշատ հստակ դիրքորոշում⁴³։

Այդ «հստակ դիրքորոշումը» չհապաղեց։ «Դեռին գրքում» հրապարակված դիվանագիտական գրազրույթներից կարելի է եզրակացնել, որ արտաքին գործերի մինիստր Անոտոն իր ղեսպան Պոլ Կամբոնին հրահանգել էր չեզոքություն պահպանել հայ-թուրքական հակամարտությունում։ Նվ ահա վերջինս էրզրումի հյուպատոսին ուղղված 1894 թ. դեկտեմբերի 22-ի իր «հատուկ հրահանգներում» հենց այդ միտքն էր ընդգծում։ «Պարոն հյուպատոս,— գրում էր Կամբոնը։ Խնդրում եմ հանձնարարել Ձեր պատվիրակին (Սասնո դեպքերի հետաքննության հանձնաժողովում—Ռ. Ս.) պահպանել բժախնդիր անկողմնակալություն։ Նա ո՛չ օսմանյան իշխանությունների պաշտպանն է, և ո՛չ էլ հայերի փաստաբանը։ Նա միայն պետք է ներշնչվի մի ցանկությամբ. լույս սփռել մթին այն փաստերի վրա, որոնք անհանգստացնում են Նվրոպային, և որոնց ծագումն ու զարգացումը տակավին պարուրված են գաղտնիքով։

⁴⁰ Նույն տեղում, էջ 11։

⁴¹ Նույն տեղում, էջ 12—13։

⁴² Նույն տեղում, էջ 18։

⁴³ Նույն տեղում, էջ 23։

Արդյո՞ք Սասունի միջադեպերի հիմնական պատճառը քրդերի ծայրահեղությունները և տեղական վարչության թողութությունն է: Արդյո՞ք դրանք, ինչպես պնդվում է, հետևանք են հայկական ազիտացիայի, որը հրահրվել է և քաջալերվում է դրսից: Կարելի՞ է արդյոք ասել, որ առկա է եղել խռովություն օսմանյան իշխանության դեմ: Արդյո՞ք ռեպրեսիաները հավասարազոր են եղել շարժման լրջությանը: Բուն շարժումն արդյո՞ք չի եղել մեկն այն կոիվներից, որ հաճախ մղել են տարբեր ազգության պատկանող երկու խմբերը՝ անասունների՝ ու բերքին տիրաձայնու համար: Տեղերն ուղարկված զինվորների դիակներն արդյո՞ք վկայում են նրանց կողմից թույլ տրված ծայրահեղությունների մասին: Արդյո՞ք բոլոր այդ դիակները կանոնավոր բանակից են:

Սրանք են այն հիմնական հարցերը, որոնք ես կխնդրեի, որ պարզաբանվեին Ձեր պատվիրակների կողմից⁴⁴:

1895-ի հունվարի 24-ին Կամբոնը տեղեկացնում էր Անտոյին, որ Հետաքննչական հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար նշանակված Ֆրանսիայի, Ռուսաստանի և Անգլիայի պատվիրակները ժամանել են Մուշ⁴⁵, իսկ փետրվարի 6-ի իր զեկուցագրում նա հայտնում էր այդ պատվիրակների առջև ծառացած դժվարությունների մասին: «Մեր հյուպատոսները հայտնում են, — գրում էր դեսպանը, — որ օսմանյան իշխանությունները բոլոր հնարավոր միջոցներով փորձում են խանգարել վկաներին խոսելու»⁴⁶: Փետրվարի 21-ին Կամբոնը տեղեկացնում էր Անտոյին, որ Ֆրանսիական պատվիրակ Վիլբերի բազմաթիվ հեռագրերից իրեն պարզ է դարձել, որ համաձայն Սասնո դեպքերի ականատես երկու հայ գյուղացիների վկայության, թուրքական զորքերը և քրդերը հարձակվել են Շենիկ, Սեմալ և Գեյլեգուղան գյուղերի վրա, հրկիզել դրանք և կոտորել ծերերին, կանանց ու երեխաներին, իսկ այնուհետև հետապնդել Անդոկ լեռան վրա ապաստանածներին: Սեմալ գյուղի քահանան սպանվել է իրեն ուղեկցող զինվորների կողմից: Ականատեսների պատմածների մեջ ինչ-որ հակասություն նկատելով, երեք տերությունների պատվիրակները Հետաքննչական հանձնաժողովից պահանջել են իրենց տանել Մուշից երեք ժամվա հեռավորության վրա գտնվող մի գյուղ, ուր քաշվել էին ջարդերից փրկված հայերը, սակայն թուրքերը, «դատարկ պատրվակներով» մերժել են նրանց պահանջը: Նշվում էր նաև, որ Կամբոնը, ռուսական դեսպան Ա. Նելիդովը և անգլիական դեսպան Ֆիլիպ Քարրին պահանջել են, որ Սասնո գործերում կարևոր դեր խաղացած քրդական շեյխերը, որոնք Հետաքննչական հանձնաժողովից խուսափելու համար պատրաստվում էին ուխտագնացության Մեկկա, նուրնպես ներկայանան դատարան: Զեկուցագրի վերջում ասվում էր, որ դեսպանությունում ստացվող տեղեկությունները վկայում են, որ «նույնիսկ Սասունի շրջանից դուրս, ամենուրեք շարունակվում են հայերի խուլ հալածանքները իշխանությունների կողմից»⁴⁷:

Երկու շաբաթ անց՝ 1895 թ. մարտի 6-ին Կամբոնը հեռագրում էր Փարիզ, որ օսմանյան լիազորները, անհանգստացած հայ ականատեսների վկայություններից, փորձում են շեղել հետաքննությունն իր նորմալ ընթացքից: Նրանք արդեն ընդունում են, որ զորքերը դիմել են գործողությունների, սակայն դրանք իբր անհրաժեշտ էին հայ խռովարարներին պատժելու համար: «Անկողմնակալության քողի տակ, — գրում էր դեսպանը, նրանք փորձում են հաստատել, որ տեղի է ունեցել խռովություն և որ զորքերի մահացու միջամտությունը կատարելապես արդարացված է»⁴⁸:

⁴⁴ Նույն տեղում, էջ 31—32:

⁴⁵ Նույն տեղում, էջ 33:

⁴⁶ Նույն տեղում, էջ 35:

⁴⁷ Նույն տեղում, էջ 36:

⁴⁸ Նույն տեղում, էջ 37:

Հիշյալ զեկուցագիրը հետաքրքրական է նրանով, որ այնտեղ առաջին անգամ խոսվում է այն բարենորոգումների մասին, որոնք Հայաստանում անցկացնելու համար դեպքանները սուլթանի խնդրանքով պետք է իրենց խորհուրդները տային: Որպես անհրաժեշտ պայման, ըստ Կամբոնի, ամենից առաջ պիտի ուժեղացվի կենտրոնական իշխանությունն այն վիլայեթներում, ուր հայերը բնակչության կարևոր տարրն էին կազմում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում, նահանգապետներն ու փոխնահանգապետները նշանակվեին քրիստոնյաներից, ստեղծվեր հայերից ու մահմեդականներից բաղկացած խառը ուստիկանություն և այլն⁴⁹:

1895 թ. ապրիլի 18-ին Կամբոնը տեղեկացնում էր Անտոյին, որ երեք դեսպանները միասին պատրաստել են Ասիական Թուրքիայի հայկական նահանգներում անցկացվելիք վարչական բարենորոգումների նախագիծ, որն ինքը ուղարկում է մինիստրին, խնդրելով քննել և հավանություն տալ⁵⁰: Ասվում էր նաև, որ այդ նախագիծը, իրենց կարծիքով, պարունակում է այն նվազագույն միջոցառումներն ու ռեֆորմները, որոնք անհրաժեշտ է կիրառել վերջին իրադարձությունների հետևանքով ծագած հուզումներին: Վերջ դնելու, կարգ ու կանոնը վերականգնելու և բնակչության անվտանգությունն ապահովելու համար⁵¹:

Հեռագրին կցված էր երկու հավելված.

«1. Հիշատակագիր. մարտ—ապրիլ 1895 թ.

2. Նախագիծ վարչական բարենորոգումների, որոնք պետք է ներդրվեն Հայկական նահանգներում (այժմյան էրզրումի, Բիթլիսի, Վանի, Սիվասի, Մամուրեթ-ուլ-Ազիզի, Դիարբեքի և Կիլիկիայի նահանգներում)»⁵²:

Ապրիլի 26-ին ուղարկված իր պատասխանում Անտոնը նշում է, որ երեք դեսպանների կողմից պատրաստված նախագիծը, թվում է, բավարարություն կտա դրանցում շահագրգռված բնակչությանը և այգպիսով կկանխի վերադարձն այն դժվարությունների, որոնցից խուսափելը համապատասխանում է բոլորի շահերին⁵³:

Վերջապես, մայիսի 16-ին Կամբոնը հեռագրում էր Անտոյին, որ բարենորոգումների նախագիծը մայիսի 11-ին հանձնվել է սուլթանի առաջին քարտուղար Թահսին բեյին, իսկ մայիսի 15-ին Աբդուլ Համիդն իր ներկայացուցչին՝ Մյունիր բեյին ուղարկել է երեք դեսպանների մոտ, հաղորդելու համար, որ ինքը ջանասիրությամբ կուսումնասիրի նախագիծը և չի ուշացնի իր պատասխանը⁵⁴: 1895 թ. հունիսի 3-ին Կամբոնը տեղեկացնում էր Անտոյին, որ հենց նոր ստացել է սուլթանի պատասխանը հայկական բարենորոգումների վերաբերյալ:

«Սուլթանի խորհրդականների կողմից պատրաստված և երեք շաբաթվա ընթացքում բազմիցս վերափոխված ռեֆորմների նախագիծը,— գրում էր դեսպանը,— տեղի է ունեցել, որը ո՛չ մի լուրջ դրույթ չի պարունակում և ո՛չ մի երեշխիք չի առաջարկում: Իմ պաշտոնակիցները և ես որոշել ենք վաղը նորին մեծությանը հայտարարել, որ իր նախագիծը նույնիսկ չի կարող քննարկման հիմք ծառայել»⁵⁵:

Պետք է ասել, որ ֆրանսիական դեսպան Պոլ Կամբոնի և արտագործմինիստր Գաբրիել Անտոյի միջև 1895 թ. հունիս-հուլիսին շարունակվող

⁴⁹ Նույն տեղում, էջ 38:

⁵⁰ Նույն տեղում, էջ 43—44:

⁵¹ Նույն տեղում, էջ 44:

⁵² Լ. Ե. Օ. Հայոց հարցի վավերագրերը. Թիֆլիս, 1915, էջ 201—234: Բնագիրը տե՛ս Documents Diplomatiques, 1893—1897, p. 43—56.

⁵³ Նույն տեղում, էջ 57:

⁵⁴ Նույն տեղում, էջ 66:

⁵⁵ Նույն տեղում, էջ 71: Բ. դան պատասխանի հայերեն տեքստը, տե՛ս Լ. Ե. Օ. Հայոց հարցի վավերագրերը, էջ 235—237: Բնագիրը տե՛ս Documents Diplomatiques..., p. 71—72.

դիվանագիտական գրագրությունից երևում է, որ Կամբոնը դեռ ինչ-որ չափով հավատ էր ընծայում Արդուլ Համիդի ստահող խոսքերին, գերագնահատում սուլթանի բարձրաստիճան պաշտոնյաների, այդ թվում և մեծ վեզիրի, ինքնուրույն գերը Հայկական հարցի հետ կապված սկզբունքային բնույթի որոշումների մեջ: Այսպես, հունիսի 12-ի իր զեկուցագրում Կամբոնը գրում էր, որ սուլթանի միջնորդները հրաժարվում են հնազանդվել մեծ վեզիրին և որ վերջինս անգոր է իր կամքը պարտագրելու ստորագրաներին: Եվ երբ ծայր առան Հայաստանի դեպքերը, «Արդուլ Համիդը ստիպված էր անձամբ պատասխան տալու իր ժողովրդի և Եվրոպայի առաջ», քանզի նա այլևս չէր կարող մեծ վեզիրի պաշտոնում պահելու Ջեմադ բեյի նման նվաղ հեղինակավոր մի մարդու...⁵⁶:

Նույն թվականի օգոստոսի 5-ի իր զեկուցագրում հանրագումարի բերելով հայկական բարենորոգումների շուրջ տարված բանակցությունները, Կամբոնը գրում էր. «Դյուրին է հասկնալ, որ Բ. դուռն ծրագիրը ընդունելի չէ: Այն բոլոր տրամադրությունները, որ կպարունակե, կձգտին հաստատել, որ ինչպես սկզբունքներուն, նույնպես կիրարկման մեջ, Օսմանյան կայսրության ասիական նահանգներուն վարչական ներկա կազմակերպությունը ոչ մեկ հույս չի թողուր:

Բարենորոգումներու մեր առաջարկությունները միայն մեկ նպատակ ունեին, ապահովել հայերուն կյանքը, գույքը և բարեկենցաղը պաշտոնյաներու և զինվորներու կամայականության և բռնակալության դեմ, ինչպես նաև քյուրդերու ավեր ու ավարառության դեմ:

Ձերդ վսեմությունը պիտի հաստատե, որ Բ. դուռն հիշատակագիրը ոչ մեկ կերպով չի պատասխաներ այս ըղձակեաներուն: Նա կմերժե այն բոլոր առաջարկությունները, որոնք կվերաբերին բարենորոգման իսկական կետերուն... Գալով մեր հիշատակագիրին մեջ մատնանշված այն կետերուն, որ կդնահատեին եռաշխալագութունը և վերանսկզումի միջոցները, Դուռը պարզապես հարմար դառնեց լուսթյան մառնել զանոնք (ընդգծումն իմն է—Ռ. Ս.): Դա ևս ավելի վճռական մերժում է և զոր չի քողարկեր ոչ մի ձևական երևույթ»⁵⁷:

Ամփոփելով Բ. դուռն պատասխանը, Կամբոնը նշում էր, որ այդ փաստաթղթի բուն իմաստը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. ճիշտ է, դեսպանները խոսել են վարչական, ֆինանսական և դատական բարեփոխումների մասին, սակայն այդ բոլորը առկա է օսմանյան օրենքներում և կառավարությունը չի կարող իրենց խոստանալ դրանք կիրառել կյանքում ավելի, քան անցյալում: Ինչ վերաբերում է բռնություններին ու հարստահարություններին, որոնց զոհն են դարձել քրիստոնյաները, ապա հայտնի է, որ բոլոր արգահատելի գործողություններն արգելված են և դրանք օրենքով պատժվում են⁵⁸:

⁵⁶ Նույն տեղում, էջ 77—78:

⁵⁷ Լե օ. Հայոց հարցի վավերագրերը, էջ 271—274: Բնագիրը տե՛ս Documents Diplomatiques..., p. 36—37.

⁵⁸ Նույն տեղում, էջ 37: Ֆրանսահայ պատմաբան Արթուր Բեյերյանի հրապարակած փաստաթղթերից մեկում դեպքերի ականատես ավստրիական սպան իր նամակում գրել է հետևյալը. «Ես գրում եմ Ձեզ զգացումներից ամենատեսալիկի՝ սարսափի ազդեցության տակ... Սպանվածների թիվը հարյուրների է հասնում: Հայկական եկեղեցիում ես հաշվեցի ջարդերով փռված ավելի քան 400 դիակ, որոնց մեջ կային 70-ամյա ծերունիներ, 8 ամսական մանուկներ սարսափելի ձևով տանջամահ արված... Դա մի չլաված դաժանություն էր, որը կատարվում էր XIX դարի վերջին: Դա գազազած վայրենություն էր, որն անհարիր է 1895 թ. առաջադիմությանն ու քաղաքակրթությանը: Ես սեփական աչքերով տեսել եմ, թե ինչպես սպաները, ընդհուպ մինչև բարձր պաշտոնյաները, օրինակ էին ծառայում, կրակելով զքթ-քախտների վրա՝ զինին ձեռքներին... Մինչև այժմ ես դեռ ականատես չեմ եղել այսպիսի

Ինչպես հայտնի է, Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի կառավարությունները շարունակվեցին Ռ. դռան առաքելությունները և բանակցությունները շարունակվեցին նաև օգոստոս—սեպտեմբերին՝ մինչև որ նոր բրունությունները (Գում-Գափուի խաղաղ ցույցի ցրումն ու կոտորածները էրդրումում, Տրապիզոնում, Սև ծովի ասիական ափերին և այլուր) չտային ապացույցներ այն բանի, որ Արդու Համիդը բանակցությունների միջոցով սոսկ ժամանակ էր շահում հայկական ջարդերի իր ծրագիրը պատշաճ կերպով մշակելու համար, որը և նա իրականացրեց ինչպես հայաբնակ գավառներում, այնպես էլ մայրաքաղաքում՝ Եվրոպական դեսպանների աչքի տալիս։ Ու թեև վերջիններս, մասնավորապես Պոլ Կամբոնը, շարունակում էր բարեխղճորեն տեղեկացնել կատարվածի մասին իր կառավարությանը, Անտոն և մյուսները իրենց պարտքը «Արևելքի քրիստոնյաների» նկատմամբ համարում էին կատարված։ Դրան ավելացան նոր հակասություններ մեծ տեղությունների միջև։ Եթե Անգլիան մի կարճ ժամանակ հանդես եկավ որպես վճռական գործողությունների կողմնակից՝ պահանջելով իրագործել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը, ապա Ֆրանսիան և Ռուսաստանը, նախաձեռնելով մայիսյան բառնիկի ստանդարտի ծրագիրը, շատ շուտով ետ քաշվեցին և ոչ մի վճռական քայլի չդիմեցին, երբ կողոպուտն ու ջարդերը վերստին շարունակվում էին 1895-ի աշնանը և 1896-ի սկզբին, թեև դեսպաններն ու հյուպատոսները անընդհատ տեղեկացնում էին կատարվող բռնությունների մասին, նշելով, որ դրանք կազմակերպված բնույթ են կրում և իրականացվում են իշխանությունների գիտությունը և հաճախ նրանց մասնակցությամբ⁵⁹։

«Դեղին գրքում» տեղ գտած տասնյակ փաստաթղթերից մեջ բերենք Երկու առավել բնորոշները։ 1895 թ. հոկտեմբերի 31-ի զեկուցագրում, հասցեագրված արտաքին գործերի մինիստր Գ. Անտոյին, դեսպան Պոլ Կամբոնը գրում էր. «Հակառակ այն պաշտոնական հաղորդագրությունների, որոնցով Բարձր դուռը ողողել է Եվրոպական մամուլը, և այն շրջաբերականների, որոնցով նա դիմում է արտասահմանյան իր ներկայացուցիչներին՝ աստիճանաբար տարածվող ագիտացիան հերքելու կամ հարցը խեղաթյուրելու նպատակով, դրությունը զնալով վատթարանում է կայսրության ողջ տարածքում։ Մեր հյուպատոսների բազմաթիվ հեռագրերն ու հանգամանային զեկույցները, որ ես նտանում եմ ամեն օր, իմ ուղարկությունը հրավիրում են այն իրողության վրա, որ ամենուրեք մահմեդականներին զրգռում են, նրանց անսքող կերպով նախապատրաստում հարձակման քրիստոնյաների դեմ, որ նրանց զենք ու զինամթերք է վաճառվում, որ տեղի են ունենում գաղտնի ժողովներ, սադրանքներ, որ նրանք սպառնում են։

Տրապիզոնում դեպքերն ավելի լուրջ էին, քան սկզբում կարծում էինք։ Ապացուցված է, որ հայերի ջարդը մահմեդականների կողմից վաղուց կանխատեսված և կազմակերպված էր և որ առաջինները ոչնչով չեն գրգռել Երկրորդներին»⁶⁰։

Նույնը կրկնվեց մեկ տարի անց, այս անգամ Կ. Պոլսի հայկական թաղամասերում 1896 թ. օգոստոսի վերջին, երբ Արդու Համիդը, օգտագործելով դաշնակ հեղափոխականների արկածախնդրությունը՝ օսոմանյան բանակի գրավումը, երեք օրում, Եվրոպական դեսպանների աչքի առջև կոտորեց

վայրենի դաժանություն, նման ջարդի ու կոտորածի, որ կատարվեց ադալետի սահմանադրությամբ, դա մի երեկո է, որը հնարավոր չէ նշանակել միայն մի՝ «ստորություն» բառով։ Արթուր Բեյլերյան. Երկու փաստաթուղթ 1895 թվականի կոտորածների մասին. — «Բանբեր Հայաստանի արևմտյան», 1971, № 1, էջ 102—103։

⁵⁹ S. Documents Diplomatiques..., էջ 165, 169, 172, 175, 185, 199—211; Հայերի լեզվաբանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 149—157, 191—197։

⁶⁰ Documents Diplomatiques..., p. 162—163.

մոտ 10 հազար հայ: Հաղորդելով այդ մասին Անտոյին 1896 թ. սեպտեմբերի 3-ի իր ընդարձակ զեկուցագրում, գործերի ժամանակավոր հավատարմատար Ժ. դը լա Բուլինիերը գրում էր. «Ես կարող էի Ձերդ վսեմությանը ցիտել փաստերի մի անվերջանալի շարք, որը հաստատում է, որ սուլթանն ինքն է զենք դնում այդ մսագործների ձեռքը և նրանց հրամայում նետվել այն ամենի վրա, ինչ հայկական է»⁶¹:

Սակայն ինչ նշանակություն կարող էին ունենալ նման զեկուցագրերը, հեռագրերն ու հաղապարհները, երբ Համիդը լավ գիտեր, որ իր բարեկամ Անտոյն հանդես չի գա թուրքական շարագործությունների դեմ: Ավելին: 1896 թ. սեպտեմբերի 26-ին ընդունելով արձակուրդից վերադարձած Պոլ Կամբոնին, սուլթանը շտապում է ասելու նրան, որ ինքը հույս ունի, որ «Ֆրանսիան ու նրա ներկայացուցիչը աջակցություն ցույց կտան և կպաշտպանեն իրեն ներկա ճգնաժամում»⁶²:

«Ես նրան պատասխանեցի, — գրում էր դեսպանը, — որ մենք, որպես Թուրքիայի փորձված բարեկամներ, իրավունք ունենք ասելու ճշմարտությունը:

Բոլոր կառավարությունները, — ասացի ես նրան ըստ էության, — խիստ անհանդուրժեցած են: Եվրոպական հասարակական կարծիքը հուզվում է, մտածելով այն: Չարդերի ու թալանի ժառանգ, որոնք տնեցի են երեք օր՝ ոստիկանության ու զորքերի բարյաշակամ աչքերի առաջ...»: Այնուհետև դեսպանն ասել է, թե որոշ շրջանակներում պնդում են, որ իբր սուլթանն այլևս ի վիճակի չէ ստիպելու իրեն հնազանդվել, որ անարխիան կատարյալ է և արդեն խոստում են այն միջոցների մասին, որոնք անհրաժեշտ է ձեռք առնել ուժեղ և հեղինակավոր կառավարություն ստեղծելու համար: «Սակայն ֆրանսիական կառավարությունն այդպես չի կարծում, — ավելացրել է դեսպանը: Նա գտնում է, որ Բարձր դուռն անդոր է, բայց սուլթանն իր աչքում մնում է միակ կառավարող ուժը Թուրքիայում, և նա մտադրություն չունի այն թուլացնելու: Սակայն, եթե մենք հավատում ենք, որ Ձերդ մեծությունը բավականաչափ ուժեղ է՝ կրոնական աշխարհին ու բանակին իր կամքը պարտադրելու համար, ապա մենք նրան ենք համարում պատասխանատու և խնդրում ենք օգտագործել իր հեղինակությունը»: Այս ընդհանուր բնույթի առաջարկներից հետո, Կամբոնն անցնում է հայերի նկատմամբ տարվելիք քաղաքականությանը, խորհուրդ տալով սուլթանին ջանալ ազգաբնակչության բուն զանգվածն անջատել հեղափոխականների մի փոքր խմբից, ազատ արձակել անհիմն բանտարկված հազարավոր անմեղներին, կյանքում կիրառել ռեֆորմները, հրավիրել ընդհանուր ժողով (Assemblée Générale) և ընտրել տալ մի նոր պատրիարք»⁶³:

Ամենակարևորն այս փաստաթղթում Կամբոնի եզրակացությունն է. «Սուլթանն ինձ միանգամայն բավարար խոստումներ տվեց, սակայն կարելի է երկյուղել, որ նա դրանցից և ոչ մեկը չի կատարի: Թվում է, նա հավատացած չէ եվրոպական համաձայնության հիմնավոր լինելու մեջ և դա արդեն բավական է, որպեսզի նորին մեծությունը մեղմի այն անհանգստությունը, որ նրան կարող էին պատճառել դեսպանների դիմումները»⁶⁴: Անտոյի առաջարկին՝ սուլթանի խոստումներն ընդունել որպես հիմք և Կրետեի հարցի կարգավորման օրինակով հրավիրել դեսպանաժողով Կ. Պոլսում, Կամբոնը որոշակի պատասխանում է, որ Կրետեի հարցը լուծվեց, որովհետև սուլթանը համոզվել էր, որ ապստամբության շարունակությունը կարող է հանգեցնել Եվրոպայի միջամտությանը, մինչդեռ «հայկական գործը» շարունակվում է և վատթարանում, որովհետև սուլթանը ինքն իրեն զգում է:

⁶¹ Նույն տեղում, էջ 275:

⁶² Նույն տեղում, էջ 293:

⁶³ Նույն տեղում:

⁶⁴ Նույն տեղում, էջ 294:

հենց այդ միջամտության հովանու ներքո: Ուստի, այլևս ժամանակը չէ ուսումնասիրելու տարբեր ծրագրերը և հանդես գալու առաջարկով: Ճեղքն այսօր այն մասին է,— եզրակացնում էր Կամբոնը,— որ նրան (Սուլթանին—Ռ. Ս.) պարզ ու խիստ ձևով հասկացնել տրվի Եվրոպայի հոգնածությունը, նրա կամքը՝ պաշտպանելու ազդեցություններին, քրիստոնյաների շահերը և պահպանելու Օսմանյան կայսրության ամբողջականությունը՝ կանգնեցնելով նրա գահավիճումը դեպի կատարյալ ավերակների անդունդը⁶⁵:

Ահա հարցի այս վերջին կողմն էր գերակշռում Ֆրանսիայի մերձավորարևելյան քաղաքականության նժարին՝ թույլ չտալ, որ փլուզվի նեխած ու փտած օսմանյան բռնատիրությունը:

Համիդյան բռնությունները, հատկապես 1896-ի աշնանը կազմակերպված ջարդերը, ինչ-որ չափով տեղից շարժեցին Եվրոպայի հասարակական կարծիքը, արձագանք գտան մամուլում: Ընդունված է կարծել, որ առավել բուռն բողոքների ու դատապարտող ելույթների մեծ մասը բաժին է ընկնում Ֆրանսիային: Մինչդեռ դա այդպես չէ: Պատճառը, ինչպես վերև արդեն ասվեց, այդ երկրի դրամատիրական գաղութային շրջանների հատուկ շահագրգռվածությունն էր թուրքական գործերում, որն իր արտացոլումն էր գտնում և ֆրանսիական դիվանագիտության ձեռնարկած քայլերում, և ծախու մամուլի բռնած դիրքում: Դրան պետք է ավելացնել Աբդուլ Համիդի ու նրա գործակալների անվիճելի շնորհքը մի շարք լրագրեր կաշառելու գործում: Վերը նշված ֆրանսահայ պատմաբան Արթուր Բեյլերյանը չի չափազանցնում, գրելով հետևյալը. «Ֆրանսական մամուլը, մեծամասնությունը համիդյան շողշողուն կարմիր ոսկիներին մաղնիսացած, կծածկեր կամ կխեղաթյուրեր լուրերը, նույնիսկ երբեմն զոհը սպանիչ ներկայացնելով: Այդ պատմական օրերուն, Փարիզի ավելի քան քսան օրաթերթերին երեքի խմբագրապետները միայն անվերապահորեն անարգության սյունին գամեցին կարմիր սուլթանը: Անոնցմե մին ժորեսն էր, իսկ մյուս երկուքը՝ Կլեմանսոն և Ռոշֆորը»⁶⁶ (խմբագրում էր L'Homme Libre թերթը—Ռ. Ս.): Ավելին, առանձին թերթեր ապակողմնորոշում էին ընթերցողին գլխավոր շրջված «փաստերով»: Այսպես, փարիզյան ամենատարածված «Le petit Journal» օրաթերթը 1895 թ. նոյեմբերի 24-ի համարում զետեղել էր մի նկար, որը պատկերում էր, թե ինչպես էին հայերը կոտորում մզկիթից դուրս եկող մահմեդականներին⁶⁷: Նույն 1895-ին լույս տեսավ Ռ. դե Կուրսոնի «Հայկական խռովությունը, նրա ծագումը, նրա նպատակը» խորագիրը կրող դրքույկը⁶⁸, որի հեղինակը ըստ էության ջանում էր ժխտել Սասունում և Արևմտյան Հայաստանի այլ վայրերում բռնկված ազատագրական ընդվզումների ինքնաբերական բնույթը՝ դրանք անվանելով Թեմալյի ափերին հղացած «արհեստական խռովություն»⁶⁹: Նրա ասելով, անգլիական մամուլը ութ տարի շարունակ «Հայկական ջարդեր» սյունյակի տակ հրապարակում էր խիստ չափազանցված լուրեր, տեղեկություններ, զանազան պատմություններ, որոնք և դարձան ֆրանսիական լրագրական միջոցների հիմնական աղբյուրը⁷⁰: Ավելին, հեղինակը մեղադրում էր հայ ականատեսներին ուռճացված լուրերի տարածման մեջ: «Ծշմարտությունը խեղաթյուրելու ու փրացնելու պահանջը,— գրում էր նա,— հատուկ է Արևելքի ժողովուրդներին և, առանձնապես, հայերին, որոնց հակումը դեպի կեղծիքը խոստովանում են

⁶⁵ Նույն տեղում, էջ 295:

⁶⁶ Տե՛ս «Աշխարհ», 4 հունվար 1986, թիվ 1400:

⁶⁷ Տե՛ս Edmond Khayadjian. Archag Tchobanian et le mouvement arménophile en France. Marseille, 1986. p. 35—36.

⁶⁸ R. Des Coursons. La rébellion arménienne, son origine-son but. Paris 1895.

⁶⁹ Նույն տեղում, էջ 6:

⁷⁰ Նույն տեղում, էջ 10—11:

նույնիսկ նրանց հայրենակիցները: Որպես «նմուշ» հեշինակը վկայակոչում էր Նյու Նորքի ազդեցիկ թերթերից մեկում տպագրված ոման մի հայի նամակը իր հավատարմիցներին, որում նա աղաչում էր նրանց «ասել միայն ճշմարտությունը՝ դիմադրելով հանդեպ կեղծիքն ունեցած իրենց բնական մոլուցքին»⁷¹։ Սասնո գլուղներում, մասնավորապես Տալվորիկում, թուրքական կանոնավոր զորքերի գազանությունները նա անվանում էր լեզենդ, անգլիական թերթերի հորինվածք: Հեղինակը մեջ էր բերում մինչև 1894 թ. նոյեմբերը Մուշում գտնվող «Քսիմենեսի» քրդերի թվաքանակի ճշտման հարցերով զբաղվող ականատեսի վկայությունը, որի համաձայն կանանց, երեխաների ու վատառողջների նկատմամբ իբր հանդես էր բերվել առավել հնարավոր ականածանք՝ Իսլամի ու մարդկայնության կանոններին համապատասխան⁷²։

Այնուհանդերձ, ազատասեր Ֆրանսիայի զավակները չէին լռում, բողոքում էին սուլթանական բռնությունների դեմ, կազմակերպում հայապաշտպան, երկկոնք, հանդես գալիս մամուլում, Ազգային ժողովում։

Առաջիններից մեկը, որն արտահայտվեց, մեծատաղանդ բանաստեղծ Պիեռ Կիլյառն էր՝ Արշակ Չոպանյանի և նրա միջոցով հայ ժողովրդի ազնիվ ու անկեղծ բարեկամը։ Այդ շրջանում նա ավանդում էր Կ. Պոլսի հայկական կաթոլիկ քոլեջում ֆրանսերեն ու լատիներեն և բնականաբար չէր կարող հանդես դալ բացահայտորեն։ Սակայն Կիլյառը պատրաստում և Մոսկոնի դեպքերին նվիրված մի լուրջ հոդված, որը լույս է տեսնում 1895 թ. սեպտեմբերի համարում։ Հեղինակը հասարակության ուշադրություն էր հրավիրում այն իրողության վրա, որ Սասնոյի խաղաղ հայ բնակչության դեմ գործադրված անզուսպ գազանությունները ոչ թե պատահական ու անսպասելի բնույթ էին կրում, այլ պարբերաբար կրկնվող բռնություններ էին, որոնք կարող էին ամեն օր վերսկսվել ամենուրեք Հայաստանի ցանկացած վայրում և հայաշատ քաղաքներում։ Իր հոդվածում նա օգտագործել էր ինչպես մեծ տերությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ըստեղծված թուրքական հանձնաժողովի, այնպես էլ իր սեփական հետաքրքրերով հայտարարված, որ նա ստացել էր ջարդից խուսափած մի քանի սասունցիների հետ զրուցելիս։ Նա փաստեր էր բերում այն մասին, որ սովորական հրացանով զինված քաջարի պաշտպանների վրա սուլթանական կանոնավոր զորքերը և համիդիե քրդական զնդերը ուղղել էին 13 թնդանոթ⁷³։ Հումանիստ բանաստեղծը դեռ անկեղծորեն հավատում էր, որ Աբդուլ Համիդը շրջապատված է ապիկար խորհրդականներով, որոնք և մղում էին նրան դժան գործողությունների։

Նվ ահա. հիշյալ հոդվածի հրապարակումից շատ շանցած, 1896 թ. օգոստոսին, օտոմանյան Դաշակի դեպքից հետո Պ. Կիլյառը Օսմանյան կայսրության մայրաքաղաքի փողոցներում անձամբ ականատես է դառնում թուրք խաթամուծի և Կ. Պոլսի հրավիրված քրդերի ու լազերի կողմից քաղաքի հայ բնակչության քստմենյի սպանդին, որին զոհ գնացին 10 հազար հայեր⁷⁴։ Տեսածից ցնցված, բանաստեղծը ջանք չի խնայում Հայկական հարցի բուն իսկ էության մեջ խորանալու, փաստերն ու պատմական իրողությունները անկողմնակալ քննելու և ֆրանսիացի իր հայրենակիցներին ճշմարտությունը պատմելու համար։ Վերադառնալով Փարիզ, Պիեռ Կիլյառը հրապարակում է տասնյակ հոդվածներ թերթերում ու ամսագրերում,

⁷¹ Նույն տեղում, էջ 11։

⁷² Նույն տեղում, էջ 75։

⁷³ Revue de Paris, 1-er septembre 1895, մեջբերվում է ըստ E. Khayadjian. Op. cit. p. 28-29.

⁷⁴ J. de Morgan, Contre le barbares de l'Orient. Etudes sur la Turquie Paris-Nancy, 1918, p. 269.

առանձին բրոշյուրներով ու գրքերով երևան հանում իր կուտակած փաստերը⁷⁶, հիմնադրում ու խմբագրում «Pro Armenia» երկշաբաթյա թերթը, խմբագրական կազմի մեջ ընդգրկելով այնպիսի երևելի դեմքերի, ինչպես Անատոլ Ֆրանսը, Ժան Ժոհանսը, հասարակական-քաղաքական հայտնի գործիչներ Ժորժ Կլեմանսոնն ու Ֆրանսիս դը Պրեսանսեն և բանաստեղծ էժեն դը Ռոբերտին։ Արշակ Չոպանյանի՝ Փարիզում հաստատվելուց դեռ առաջ Կ. Պոլսից ուղարկած նամակները, որ Պ. Կիլաուր հանձնում է Անրի Բոերին, «L'Intransigeant» թերթի խմբագիր Անրի Ռոշֆորին և «լրագրության իշխանուհի» տիկին Սեվերինին, վերջիններիս մղում են հանդես գալու հայապաշտպան հողվածներով, ցույց տալով, որ հայկական շարժերի կազմակերպիչը հենց ինքը սուլթանական կառավարությունն էր⁷⁶:

Իրենց բանավոր ու գրավոր խոսքով 1895—1896-ին հանդես եկան գիտնականներ ու գրողներ, նկարիչներ ու հրապարակախոսներ, ֆրանսիական պառլամենտի անդամներ (Անտուան Մեյե, Անատոլ Ֆրանս, Ֆրանսիս դը Պրեսանսե, Վիկտոր Բեյար, Ալբեր Վանդալ, կոմս Ալբեր դը Մյոն, Անատոլ Լերուա Բոլիո, հայր Ֆելիքս Շարմատան, Դենի Քոշեն և ուրիշներ)⁷⁷: Անատոլ Ֆրանսի նախաձեռնությամբ անցկացվեցին մի շարք հանրահավաքներ, նա կազմակերպեց ու անձնական մասնակցություն ունեցավ հայ որբերի օգտին հանգանակությունը⁷⁸: Հասարակական կարծիքի ճնշման ներքո և, մասնավորապես, ի պատասխան պատգամավորների պալատում Դենի Քոշենի արված հարցապնդման, ֆրանսիական պառլամենտն առաջին անգամ անդրադարձավ «Հայաստանի գործերին»: 1896 թ. նոյեմբերի 3-ի նիստում կառավարության անունից հանդես եկավ արտաքին գործերի մինիստր Գաբրիել Անտոն, որի երկարաշունչ ճառը Հայկական հարցում իր դիվանագիտության գովերգման մի նմուշ կարելի է համարել: Ընդունելով հանդերձ, որ 1895—96-ի ձմռանը «ցավալի իրադարձություններ» են տեղի ունեցել Հայաստանում, որոնց լրջությունը բացահայտ է, նա պատգամավորներին փորձում էր ներշնչել, որ հաղորդակցության դժվարությունները խանգարել են բացահայտելու «ստույգ ճշմարտությունը», «հիշեցնում» նրանց, որ Հայաստանը բաժանված է Ռուսաստանի, Պարսկաստանի ու Թուրքիայի միջև: «Թուրքական նահանգներում,— պնդում էր նա,— մեր ձեռքի տակ ունեցած վիճակագրության համաձայն, հայ ազգաբնակչությունը, անկասկած, կազմում է 13 տոկոսից ոչ ավելի»: Ընդ որում, ըստ Անտոնի «ասիական» նահանգներում չկա մի կետ, որտեղ նա կարողանար ստեղծել մի կենտրոն, որի շուրջը տեղի ունենար որոշակի մի ինքնավարության կազմավորումը⁷⁹:

Իր ճառում Անտոն վկայակոչում էր Բեռլինի պայմանագիրն ու Կիպրոսի կոնվենցիան, որպես ապացույց այն բանի, որ Նվրոպան և հատկապես Անգլիան «զբաղվեցին հայերի վիճակով»: Այդ «փաստի» հիման վրա նա այն միտքն էր անցկացնում, որ կապը Նվրոպայի հետ հայկական որոշ

⁷⁶ P. Quillard. La Question arménienne et l'Europe, Paris, 1896, P. Quillard et L. Margery. La Question d'Orient et la politique personnelle de M. Hanotaux. Paris, 1897. Պիեռ Կիլաուրի մասին մանրամասն տե՛ս E. Khayadjian. Op. cit., p. 25—47.

⁷⁷ E. Khayadjian. Op. cit., p. 40. Կապի են Դասաբեյան. Արշակ Չոպանյան. Երևան, 1987, էջ 93—94.

⁷⁸ Sté. Fr. de Pressensé. La question arménienne. Revue des Deux Mondes t. 132, 1 dec. 1895, A. Leroy-Beaulieu. Les Arméniens et la Question arménienne. Paris, 1896; P. Charmetant. Martyrologe arménien, Paris, 1896; Idem: Le Parlement français les massacres d'Arménie La Terre Sainte, 1896, № 22.

⁷⁹ Sté. Ա. Ֆրանսի նամակագրությունը Ա. Չոպանյանի հետ, Գրականության և արվեստի թանգարան, Ա. Չոպանյանի արխիվ, Արտասահմանյան նամակների բաժին, № 9684:

⁸⁰ Documents Diplomatiques..., p. 313.

շրջանակների ներշնչել է հույս ու ցանկություն՝ հասնելու անկախության, և որ այդ շարժումը ուժգին չէր լինի, և թե չլինեին այն վատ պայմանները, որոնցում գործում էր օսմանյան վարչակարգը⁸⁰։ Հայկական այդ շարժումը, որը Ֆրանսիայում նվազ ծավալուն էր, քան Անգլիայում, զարգանալով 1885-ից սկսած, ի վերջո հանգեցվում էր Եվրոպայի միջամտությանը, «եսա-չակրաց արշավանքների» զաղափարին, որը բազմիցս ստիպել էր նրան բռնի ուժով միջամտելու Արևելքի գործերին։ Շարունակելով, մինիստրը նշում է, որ 1893-ին և հետագայում նոր դեպքեր տեղի ունեցան, սակայն դժվար է ստույգ ասել, թե ում վրա է ընկնում թույլ տրված առաջին սխալների ծանրությունը, միայն կարելի է ընդունել, որ պատիժները չափազանց խիստ էին և դրանք հանգեցրին երեք տերությունների՝ Անգլիայի, Ռուսաստանի ու Ֆրանսիայի միջամտությանը, ընդ որում վերջինս ուղղակիորեն շահագրգռված չէր այն գործում, որի մեջ նա ներքաշվեց։ Երեք տերությունների տքնաշան աշխատանքի շնորհիվ 1895 թ. հոկտեմբերի վերջին մշակվեց հայկական վիճակներում կիրառելի բարենորոգումների ծրագիրը։ Եվ եթե այդ ծրագրի կետերն անմիջապես գործադրվեին, թերևս հնարավոր լիներ խուսափել նոր դժբախտություններից։

Ցավոք,—շարունակում է մինիստրը,—բարի կամքի բացակայության, թե նոր իրադարձությունների դիմակայության պատճառով, ռեֆորմների այդ ծրագիրը կյանքում չկիրառվեց և սկսած 1895-ի նոյեմբերից կռիվներն ու ջարդերը վերսկսվեցին։ Հատկապես սարսափելի էր 1895—96-ի ձմեռը...⁸¹։ Եվ այսպես, Ֆրանսիայի դիվանագիտության պարագլուխը, պապյամետին ներկայացնելով Հայկական հարցի պատմությունը Բեռլինի կոնգրեսից հետո, խոսք չէր գտնում ասելու Թուրքիայի կենտրոնական կառավարության ու անձամբ Աբդուլ Համիդի կողմից ձեռնարկված այն քայլերի մասին, որոնց նպատակն էր հայաթափել Արևմտյան Հայաստանը բոլոր հնարավոր միջոցներով։ Դրա փոխանքեն, նա մեջ էր բերում դիվանագիտական գործակալներից մեկի զեկուցագիրը զառնազան փոքրաթիվ ավազակախմբերի, անպատասխանատու բանդիտների՝ զաչաղների վերաբերյալ, որոնք «ահաբեկում են քրիստոնյա ազգաբնակչությունը»։ Նույն աղբյուրը հաղորդում էր նաև Քերդերի, հատկապես համիդիների մասին, որոնց քաջագործությունները բոլորին հայտնի են⁸²։ Անոտոն փորձում էր ցրել նաև այն տպավորությունը, թե իբր տերությունները և, մասնավորապես, Ֆրանսիան, անտարբեր են եղել։ Միաժամանակ նա ջանում էր համոզել պատգամավորներին, որ դժբախտությունները, որոնց պատճառը վատ կառավարումն է, հավասարապես հարվածում են թե՛ քրիստոնյաներին, թե՛ մահա-մեղապաշտներին։ Ուստի տերությունները պիտի ջանան ձեռնարկել այնպիսի քայլեր, որոնք սուլթանին կմղեին բարեկամելու իր կայսրության քաղաքական ու մասնավոր կյանքը պայմանով, որ այդ քայլերը ոչ մի դեպքում չվերականգնեն Օսմանյան կայսրության ամբողջականությունը։

«Այս տեսակետը, պարոնայք, միշտ էլ եղել է Ֆրանսիայինը։ Կարելի է ասել, որ դա նրա քաղաքականության ու նրա պատմության ամենազնահատեղի ավանդույթներից մեկն է...»⁸³։ Իր ելույթի վերջին մասը Աբդուլ Համիդի բարեկամ Անոտոն նվիրում է սուլթանին «հոգի ազդեցություններից» ետ պահելու ուղղությամբ գործադրվելիք քայլերին։ Նա հույս է հայտնում, որ միասնական Եվրոպան կկարողանա հասկացնել սուլթանին, որ խոսքն ամենևին կայսրության այս կամ այն մասը, այս կամ այն կրոնը ի վնաս մյուսների հովանավորելու մասին չէ, այլ այն մասին, որ բոլորը՝ կաթո-

⁸⁰ Նույն տեղում։

⁸¹ Նույն տեղում, էջ 313—315։

⁸² Նույն տեղում, էջ 315։

⁸³ Նույն տեղում, էջ 316—317։

լիկները, հայերը, բողոքականները, մահմեդականները տառապում են նույն ցավերից և պահանջում են նույն բարեփոխումները: Եվրոպան սուլթանին ցույց կտա շարի աղբյուրը՝ քաղաքական, ֆինանսական ու վարչական ապաշնորհ կառավարումը, կառաշարկի այդ կառավարման մեջ ներդնելու այն որոշակի կարգ ու կանոնը, առանց որի պետությունը չի կարող գոյատևել: Կապահանջի կատարել իր իսկ խոստումները, իրականացնել արդեն համաձայնեցված բարենորոգումները և այլն և այլն⁸⁴:

Իր ճառի եզրափակիչ մասում հույս հայտնելով, որ Պատգամավորների պալատը իրեն կհասկանա, Անտոն վերստին շեշտում էր, որ Ֆրանսիան չի մոռանում իր կրոնակիցներին պաշտպանելու ավանդական դարձած պարտականությունները, բայց և չի մոռանում այն կապերը, որոնք երկար ժամանակից ի վեր նրան կապում են Օսմանյան կայսրության հետ, և այն պատճառները, որոնք նրան զրգում են ցանկալ այդ կայսրության ամբողջականությունը⁸⁵:

Ֆրանսիական միևնույնիստի ելույթը լայնորեն քննարկվեց մամուլում, վերհանելով խիստ հակադիր կարծիքներ: Անտոնյի ճառը, ինչպես գրում էր «Le Temps»-ը հնարավորություն տվեց ճշգրտելու Ֆրանսիայի դիրքը և Եվրոպային ցույց տալու, որ նա մտադիր է իր պետական քաղաքականությունը պաշտպանելու հետ մեկտեղ շարունակել իր մարդասիրական առաքելությունը Արևելքում, որ նա դավաճանած կլիներ իր պատմության բոլոր ավանդույթներին, եթե հրաժարվեր գործունե կերպով պաշտպանել «օդիող կեղեքման զոհերին»⁸⁶: Ֆրանսիական դիվանագիտության խոսնակը չէր ճշգրտում, սակայն, թե ի՞նչ կոնկրետ քայլեր էր ձեռնարկելու Արդուլ Համիդի բարեկամ Անտոն: Միաժամանակ, թերթը շրջանցում էր վերջինիս ճառում հնչած մեղադրականը «հայ հեղափոխական գրգռիչներին» հասցեին, իսկ Ժոզեֆ մեղադրական ճառը անվանում սոսկ «սոցիալիստական դիվանագիտության արտահայտություն», որը պարզունակ է ներկայացնում իրական պատկերը⁸⁷:

Դրան հակառակ, իր անաչառությամբ հայտնի Անրի Ռոշֆորի «L'Intransigeant» օրաթերթը մատնանշում էր, որ արտգործմինիստրի ելույթը աչքի էր ընկնում իր երկիմաստությամբ, որ դա այն ճառերից էր, որոնց գաղտնիքը միայն դիվանագետներին է հայտնի: Մեջբերելով Անտոնյի այն խոսքերը, թե «քանի որ դրությունը Հայաստանում սարսափելի էր, մենք, արտահայտվեցինք վճռական լեզվով», հոգեվածագիրն ավելացնում էր, որ այդ «վճռականությունը» հայաբերական է, քանի որ հայերին շարունակում են կոտորել ամենաբարբարոսական դաժանությամբ⁸⁸, ինչ վերաբերում է Անտոնյի այն մեղադրանքին, թե Արևելքում ծագած խռովությունների պատճառը հույ հեղափոխականներն են, թերթը միևնույնիստի այդ պնդումը համարում էր չափազանց կոմիկական, որը ծիծաղ առաջ կբերեր, եթե դրությունը նվազ աղետալի լիներ⁸⁹: Թերթը լայնորեն մեջ էր բերում Ժան Ժոզեֆի ելույթը, որտեղ ասված էր հետևյալը.

Արդյո՞ք Եվրոպան Բեռլինի պայմանագրից հետո չպետք է վերահսկեր Օսմանյան կայսրության գործողությունները, հատկապես Հայաստանում:

Մի՞թե Եվրոպան չի ձախողել իր բոլոր հանձնառումները:

Իրերի ներկա վիճակում պր-ն Անտոնյ միանգամայն տեղին չի օգտագործում խիստ բառեր հայերի դեմ, որոնք համառ դիմադրությունից հետո գարձան բռնությունների զոհեր:

⁸⁴ Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 317—318:

⁸⁵ Նույն տեղում, էջ 318:

⁸⁶ Le Temps, 5 novembre 1896.

⁸⁷ Նույն տեղում:

⁸⁸ L'Intransigeant, 5 novembre 1896.

⁸⁹ Նույն տեղում:

Հիրավի, տեղի է ունենում բնաշնչող պատեհադէ՛, որն ավերել է Հայաստանը.

Այդ սոսկալի սպանդի պատասխանատուն հենց ինքը սուլթանն է, որը Հայկական հարցից աղատվելու համար ոչնչացնում է իրեն խանգարող հպատակներին: Այո, սուլթանը խաբել է Եվրոպային, սակայն ինչ էլ լինի, պետք է այստեղ դատապարտել Եվրոպայի հանցագործությունը, որպեսզի նա անհրաժեշտ ուղղումներ կատարի:

Հատկապես երեք ժողովուրդներ իրենց վրա լուրջ պատասխանատվություն են կրում. Անգլիան, Ռուսաստանը և ավա՛ղ, Ֆրանսիան, որի քաղաքականությունը Փոքր Ասիայում նույնն է, ինչ որ Ռուսաստանինը: Վերջինիս մտահոգությունը Հայկական հարցում արտահայտել է իշխան Լոբանովը իր հարցազրույցներից մեկում. «Ես չեմ ուզում, որ Հայաստանը մեղ համար դառնա մի նոր Բուլղարիա»:

Այսպիսով, Ռուսաստանն ունեցել է սպասողական դիրքորոշում, վարել է ձգձգման քաղաքականություն, որը միանգամայն այլ կլիներ, եթե նա այդ աղբյիւն (հայերին—Ռ. Մ.) օգտագործեր հօգուտ իրեն:

Այս բոլորից հետևում է, որ Ֆրանսիական կառավարությունը մեղսակից է Հայաստանի ջարդերին⁹⁰:

Այս վերջին մեղադրանքի դեմ պալատի նախագահի բողոքից հետո Ժոռեսը հրաժարվում է իր խոսքերից, սակայն ավելացնում, որ միևնույն է, Հայաստանում տեղի ունեցած դեպքերի պատմությունը հնարավոր չէ մոռացություն տալ⁹¹:

Պետք է ասել, որ Հայկական հարցի քննարկումը Ֆրանսիայի Ազգային ժողովում և դրա արձագանքները մամուլում ինչ-որ չափով անհանգստություն պատճառեցին արտաքին գործերի մինիստր Անտույին, թեև նրա ելույթի հիման վրա Պատգամավորների պալատը ձայների մեծամասնությամբ (402 կողմ, 90 դեմ) անվերապահ հավանություն էր տվել կառավարության հայտարարությանը: Ուստի, հաջորդ օրն իսկ՝ 1896 թ. նոյեմբերի 4-ին Անտուին հեռագրում է Կ. Պոլսում դեսպան Պոլ Կամբոնին հնարավորին կարճ ժամկետում մասնավոր տեսակցություն խնդրել սուլթան Համիդից՝ նրան ծանոթացնելու համար այն հետևանքներին, որ ունեցան հասարակական կարծիքի և Պալատի վրա Հայաստանի ջարդերի շուրջ մերկացումները. «Անհետաձգելի անհրաժեշտություն է, որ սուլթանն ինքը նախաձեռնի այն միջոցները, որոնք կարող են բավարարություն տալ հասարակական կարծիքի այն շարժմանը, որը շրջվում է իր դեմ: Ողջ Եվրոպան միաձայն գտնում է, որ այլևս ոչ մի կաբիլ առյուճ չպետք է թափվի, որ բանտերը պետք է բացվեն, որ առավել աղետալի վիճակում գտնվողները պիտի պաշտպանվեն:

⁹⁰ Նույն տեղում:

⁹¹ Նույն տեղում: Հետաքրքրական է այն խոստովանությունը, որ Ժոռեսն արել է 1896 թ. մայիսի 17-ին «Petite République» թերթում տպագրված իր հոդվածում. «Եստ անգամ է եղել, որ նրբին ու բարդ հարցերում վախենալով գործել հօգուտ մարդասիրական դիմակի տակ թաքնված անասիրական շահերի ու կոմերցիաների, սոցիալիստները խուսափել են այնպիսի ելույթներից, որոնք կարող էին օգուտ բերել մարդկությանը: Կարող եմ բերել կոնկրետ մի օրինակ: Հայաստանում տեղի ունեցավ դաժան մի կոտորած, որի համար մենք շատ ցավեցինք: Լոնդոնից հայեր եկան Ֆրանսիայի սոցիալիստներին խնդրելու Փարիզում կազմակերպել միտինգ ի պաշտպանություն հայերի: Բայց մենք, եթե խղճի մտքը ասենք, չէինք իմանում, թե ինչ էին իրենցից ներկայացնում Լոնդոնի հայկական կոմիտեները և, երկուդ կրեւոյ. Թե հայկական այդ կոմիտեների հետևում թաքնված են անդլիական սոցիալիստ խարդավանքները, և որ մենք մեզ ենթարկում ենք դրուժյան բարդացմանը և կոնֆլիկտ ստեղծելուն, այդպես էլ չհամարձակվեցինք հանգես դալ: Жан Жорес. Против войны и колониальной политики. Составитель и автор комментариев Мадлен Реберну, пер. с французского. М., 1961, с. 115—116.

Ահա, առաջին ձեռնարկվելիք միջոցները»⁹²։ Միաժամանակ այդ նույն Անոտոն շտապում է պաշտոնական Հավաստագրությանը հայտարարել, որ Պատգամավորների պալատում իր արտասանած ճառը այն աստիճան տպավորել է Աբդուլ Համիդին, որ վերջինս որոշել է «միջոցներ ձեռք առնել»⁹³։

Զետեղելով միևնույնիստ այս հայտարարությունը «Անոտոն և Աբդուլ Համիդ» խորագրի տակ, «L'Intransigeant»⁹⁴ թերթը ծաղրական ոճով ավելացնում էր, որ վաղուց հայտնի է, թե ինչ իմաստ է պարունակում պաշտոնական «միջոցներ ձեռք առնել» արտահայտությունը։

«Մասնավորապես Աբդուլ Համիդը,— զրույց էր թերթը,— այնքան շատ ապացույցներ է տվել, թե ինքն ինչպես է հասկանում բարենորոգումները, որ չի կարելի դուրսն իսկ նշանակություն տալ նոր խոստումներին և մեր թղթախմոր Ռիշելյեի մեջ (խոսքը Անոտոնի մասին է—Ռ. Ս.) տեսնել այլ բան, քան վերին աստիճանի սնապարծ մի դերասանի»⁹⁴։

Իսկ արտգործմիևնույնիստության խոսնակ «Le Temps»-ը տպագրել էր Հավաստագրության հաղորդագրությունն այն մասին, որ սուլթան Աբդուլ Համիդը Ֆրանսիայի Պատգամավորների պալատի 1896 թ. նոյեմբերի 3-ի նիստի արձանագրությունը ստանալուն պես իր քարտուղարին ուղարկել է Կ. Պոլսում ֆրանսիական դեսպան Պոլ Կամբոնի մոտ, որը հասկացնել է տվել, որ ամենից առաջ անհրաժեշտ է, որ սուլթանը ձեռք առնի որոշակի թվով կոնկրետ միջոցներ՝ հանդարտեցնելու համար հասարակական կարծիքը և Եվրոպային տալու առաջին բավարարությունը⁹⁵։

Նույն թերթից տեղեկանում ենք, որ Փարիզում թուրքական դեսպան Մյունիր բեյը հավաստիացրել էր Անոտոնին, որ Աբդուլ Համիդն անմիջապես «քննել և կարգավորել է» հետևյալ հարցերը. Մաղհար բեյի հեռացումը, հայկական համաժողովի հրավիրումը, Դիարբեքի վալի Անիս բեյի պաշտոնազրկումը, նոր բռնությունների կանխումը՝ վալիներին համապատասխան հրահանգներ տալու միջոցով և այլն⁹⁶։

Ասվում էր նաև, որ Պ. Կամբոնը պահանջել է Հայաստանի վեց վիլայեթներում անցկացվելիք բարենորոգումների արագ գործադրումը⁹⁷։ Արդեն մի քանի օր հետո Կամբոնը տեղեկացնում էր Անոտոնին, թե Աբդուլ Համիդն ինչպես է հասկանում բարենորոգումների «արագ գործադրությունը» 1896 թ. նոյեմբերի 7-ին նա հեռագրում էր, որ իր հետ ունեցած երեքժամյա ընդունելության ընթացքում սուլթանն իրեն պատասխանել էր, որ ինքն արդեն ձեռք է առել Ֆրանսիայի կողմից պահանջված բոլոր միջոցները և «Փոքր Ասիայի արևելյան վեց վիլայեթներում բարենորոգումները գրեթե ամբողջությամբ կիրառվել են»⁹⁸։

Հայկական ռեֆորմների շուրջ դիվանագիտական խաղերը շարունակվեցին 1896-ի վերջին ամիսներին ևս՝ վերհանելով Անոտոնի ցուցադրական ողջ ակտիվությունը։ Այդ են վկայում «Դեղին գրքի» փաստաթղթերը, որոնց հրապարակման շարժառիթներից մեկն էլ այն էր, որ հասարակայնությունը համոզվի, որ Ֆրանսիան ամենևին էլ չի թերացել իր քրիստոնեապաշտպան առաքելության մեջ, որ նա հաճախ հանդես է եկել նախաձեռնողի դերում՝ հասնելով եվրոպական մյուս մեծ տերությունների և, առաջին հերթին, Ռուսաստանի հետ համատեղ ելույթների, կտրուկ դեմադրների և այլն⁹⁹։ Այսքանը, ոչ ավելին։

⁹² Documents Diplomatiques..., p. 319.

⁹³ L'Intransigeant, 9 novembre 1896.

⁹⁴ Նույն տեղում։

⁹⁵ Le Temps, 9 novembre 1896.

⁹⁶ Նույն տեղում։

⁹⁷ Նույն տեղում։

⁹⁸ Documents Diplomatiques..., p. 320.

⁹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 321—350։

եվ իրավացի էր մեծավաստակ պատմարան լինելով, որ «1895—1896 թթ. հայկական սարսուռներից կոտորածները կարծես միանգամայն ապահովել էին սուլթան Աբդուլ Համիդի նպատակը: Հայությունը Թուրքիայում թվում էր վերջնականապես խողխողված: Իսկ հայ դատի պաշտպան եվրոպական տերություններից ոչ մեկը այլևս ձայն չբարձրացրեց»¹⁰⁰,

АРМЯНСКИЙ ВОПРОС И ФРАНЦИЯ (1870—1890-е годы)

Доктор ист. наук Р. Г. СААКЯН

Р е з ю м е

Упомянутые годы охватывают первый этап французской политики в Армянском вопросе. Франция, в силу своей военной слабости, шла на уступки Англии в ближневосточных делах для получения ее поддержки перед лицом растущей германской мощи. С другой стороны, исходя из своих финансовых, экономических и иных интересов в Османской империи, Франция заняла пассивную позицию накануне и в годы массовых погромов в Западной Армении, осуществленных султаном Абдул Гамидом II.

И все же, под давлением общественности, французское министерство иностранных дел издало в 1897 году большой сборник дипломатических документов («Желтая книга»), которые широко вводятся в научный оборот наряду с материалами французской прессы.

THE ARMENIAN QUESTION AND FRANCE (1870—1890 years)

Prof. R. G. SAHAKIAN

S u m m a r y

The 1870—1890s were the years of the first period of France's policy in the Armenian question. Because of her military feebleness, France was obliged to yield to Great Britain in Near Eastern affairs to receive England's support in facing the increasing power of Germany. On the other hand, France had financial, economic and other interests in the Ottoman Empire. Hence, France kept a passive position during the years of mass massacres in Western Armenia, realised by Sultan Abdul Hamid II. All the same, under the pressure of public opinion, the French Ministry of Foreign Relations edited in 1897 a large book of diplomatic documents („Yellow book“) which were used in the present article along with materials from French newspapers.